ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ *2022-2026*
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Վահագն Արսենյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի թիվ 50-Ա որոշմամբ

ՋԵՐՄՈՒԿ *– 2022*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

1. Համայնքի իրավիճակի բնութագրում, վերլուծություն և գնահատում

2. Համայնքի տեսլականի, ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական նպատակների սահմանում

3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումների ներկայացում

4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծում, գնահատում և կանխատեսում

5. Համայնքի ոլորտային ծրագրերի ցանկի կազմում և առաջնահերթությունների սահմանում, ֆինանսապես ապահովված ծրագրերի ձևակերպում և ամփոփում, լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթայթման հնարավորությունների ներկայացում

Եզրափակում

Հավելվածներ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2022-2026 թթ. զարգացման ծրագիրը (ՀԶԾ) մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-ի) իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԾ-ի մշակման մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

ՀԶԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- համայնքի բնակչության թվաքանակը.
- համայնքում առկա ենթակառույցները և մատուցվող ծառայությունները.
- համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

Սույն ՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ռիսկերը), որոնց կառավարման համար նախատեսվել են որոշ գործողություններ ու միջոցառումներ:

Համայնքի 2022-2026 թթ. ՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ ունենալով հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով աստիճանաբար բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

ՀԶԾ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց՝ համայնքի ղեկավարին կից գործող խորհրդակցական մարմինը փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված Հայաստանի Հանրապետության ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

ՀԶԾ-ի 1-ին բաժնում ներկայացվում է համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը՝ հաշվի առնելով ՀԶԾ-ի մշակման չափանիշների ազդեցությունը համայնքի ՏԻՄ-ի գործունեության ոլորտների կազմի վրա, համայնքում առկա սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների ֆիզիկական վիճակի գնահատումը, դրանց շահագործման, պահպանման և նորոգման հետ կապված խնդիրները, ինչպես նաև դրանց զարգացման հնարավորությունների, կարողությունների ու ռեսուրսների

վերլուծումը և գնահատումը: Համայնքի ընդհանուր և ոլորտային կարիքների գնահատման հիման վրա կազմվել է համայնքում առկա հիմնախնդիրների ցանկը՝ առանձնացնելով նրանք, որոնց լուծումը նպատակահարմար է ներառել սույն ՀԶԾ-ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից: Բաժնում ներառվել է նաև համայնքի ՈՒԹՀՎ-վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրա և ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

ՀԶԾ-ի 2-րդ բաժնում սահմանվում են համայնքի երկարաժամկետ տեսլականը, զարգացման ռազմավարությունը և սույն ՀԶՀԾ-ի հիմնական նպատակները:

ՀԶԾ-ի 3-րդ բաժնում ներկայացվում են պետության, միջազգային և տեղական դոնոր, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և այլ կազմակերպությունների կողմից համայնքում գալիք հինգ տարիների համար նախատեսվող (շարունակվող) հանրապետական, մարզային, տարածաշրջանային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, գործողությունները և միջոցառումները:

ՀԶԾ-ի 4-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական տրանսֆերտներ, փոխառու միջոցներ)՝ դիտարկելով նախորդ երկու և գալիք հինգ տարիների եկամտային ցուցանիշները:

ՀԶԾ-ի 5-րդ բաժնում ներկայացվում է համայնքի զարգացման ոլորտային ծրագրերի ընտրությունը, դրանց առաջնահերթությունների սահմանումը՝ ելնելով համայնքի իրավիճակի գնահատման արդյունքներից, բացահայտված կարիքներից ու հիմնախնդիրներից, ենթակառուցվածքների վիճակից և ՀԶԾ-ի հիմնական նպատակներից: Բաժնում ձևակերպվել և ամփոփվել են ՀԶԾ-ում ներառվող ոլորտային ծրագրերը՝ օգտագործելով ծրագրերի կազմման օրինակելի ձևը, ինչպես նաև ներկայացնելով ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները (համայնքի բյուջե, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ, այլ) և դրանց մոտավոր արժեքներն՝ ըստ գալիք հինգ տարիների: :

ՀԶՀԾ-ի «եզրափակում» բաժնում ներկայացվում են համառոտ մոտեցումներ՝ ՀԶԾ-ի իրականացման, մշտադիտարկման (մոնիթորինգի), վերահսկման և գնահատման, տարեկան հաշվետվությունների կազմման և քննարկման, ՀԶՀԾ-ում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման, քննարկման և հաստատման գործընթացների վերաբերյալ:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Ջերմուկ համայնքը ընդգրկում է հետևյալ բնակավայրերը՝ Ջերմուկ քաղաք, Գնդեվազ, Կարմրաշեն, Կեչուտ և Հերհեր գյուղեր: Ջերմուկ համայնքը գտնվում է Վայոց ձորի մարզի արևելյան մասում:

Ջերմուկ առողջարանային քաղաքը գտնվում է մարզկենտրոն Եղեգնաձորից 50 կմ հյուսիս-արևելք, Արփա գետի ակունքի շրջանում: Հայաստանի երեք առողջարանային քաղաքներից մեկն է: Գտնվում է Երևանից 173 կմ հեռավորության վրա: Ջերմուկի տեղում նախկինում եղել է հայկական Ջերմուկ գյուղը: Հետագայում այն օտարեկրացիների կողմից ավերվել է և նրա փոխարեն նոր գյուղ են կառուցել, որը թարգմանաբար կոչել են Իստիսու: Ջերմուկ է վերանվանվել 1924 թվականին:

Ջերմուկը գտնվում է ծովի մակերևույթից 2080 մ բարձրության վրա գտնվող ոչ մեծ սարահարթում, որը երկու մասի է բաժանվումԱրփա գետի գեղատեսիլ կիրճով: Քաղաքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ-արևելյան մասում,Վայոց ձորի մարզում (պատմական Սյունիք նահանգի Վայոց Ձոր գավառի տարածքում): Բնակավայրը հիշատակվում է սկսած XIII դարից՝ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն Նահանգին Սիսական» աշխատության մեջ: Սակայն քաղաքի տարածքում գտնվող հին կիկլոպյան ամրոցի և VIII դարի եկեղեցու ավերակներն ու մնացորդները խոսում են այն մասին, որ հանքային ջրերի ակունքների մոտ գտնվող Ջերմուկ բնակավայրը գոյություն է ունեցել շատ վաղուց:

Ջերմուկի կազդուրիչ հանքային ջրերը դեռ շատ հնուց օգտագործվել են ինչպես հասարակ ժողովրդի, այնպես էլ Սյունաց Իշխանների կողմից՝ ամենատարբեր հիվանդությունների բուժման նպատակով: Այդ մասին են վկայում միջնադարում կառուցված լողավազանի մնացորդները, որոնք վերակառուցվել և վերականգնվել են 1860-ական թվականներին ցարական պրիստավ Գևորգ Խանագյանի կողմից, և այժմ էլ ժողովրդի կողմից լողավազանը կոչվում է «Պրիստավի գյոլ»: Չնայած պատմական հարուստ անցյալին, այսօրվա նոր քաղաքի հիմքը դրվել է միայն 1940 թվականին՝ առաջին առողջարանի կառուցման ավարտով: Հետագա տարիներին Ջերմուկը կառուցվել ու կառուցապատվել է, ստեղծվել են բոլոր հնարավորությունները ինչպես բնակչության, այնպես էլ հանգստացողների ակտիվ հանգստի, առողջության վերականգնման և զբոսաշրջության համար: 1967 թվականին քաղաքը ձեռք է բերում հանրապետական նշանակության քաղաքի, իսկ 1970 թվականին՝ համամիութենական նշանակության առողջարանի կարգավիճակ: 1980-ականներին քաղաքն ուներ շուրջ 10 000 բնակիչ, շուրջ 2 000 մահճակալով առողջարանների ու պանսիոնատների ցանց՝ ակտիվ հանգստի և բուժման համար նախատեսված բոլոր ենթակառուցվածքներով ու ծառայություններով: Օբյեկտիվ պատճառներով առողջարանային քաղաքի ակտիվ կյանքը 1990-ականներից մեծ տեղատվություն ապրեց, որը սկսեց աշխուժանալ 1990-ական թվերի վերջերից: Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N 1064-Ն որոշմամբ քաղաքը հայտարարվել է զբոսաշրջության կենտրոն:

Վարչական տարածքը շուրջ 5,5 հազար հեկտար է: Երևանի հետ կապվում է երկու ավտոմայրուղիներով, որոնցից «Ջերմուկ-Երասխ-Երևան» մայրուղին ավելի կարճ է և կազմում է շուրջ 175 կմ: Քաղաքը «Երևան-Գորիս-Ստեփանակերտ» մայրուղուց գտնվում է

24 կմ հեռավորության վրա:Քաղաքն ունի լեռնային կլիմա: Ամառը զով է, ձմեռը՝ երկարատև և ձյունառատ: Արևափայլի տևողությանը կազմում է տարեկան 2300 ժամ: Օդի օրական միջին ջերմաստիճանը Ջերմուկում կազմում է՝ գարնանը՝ +0.4 °C, ամռանը՝ +15.3 °C, աշնանը՝ + 4.9 °C, ձմռանը՝ -9 °C: Հունվարի միջին ջերմաստիճանը –9 °C է, նվազագույնը՝ –35 °C, հուլիսինը՝ 18 °C, առավելագույնը՝ 32 °C, տարեկան տեղումները՝ մոտ 800 մմ, հարաբերական խոնավությունը՝ 45–48%, արևափայլքի տևողությունը՝ 2340 ժ:

Կեչուտ գյուղի հեռավորությունը Ջերմուկից 3 կմ է, մարզկենտրոնից՝ 46 կմ, մայրաքաղաքից՝ 170 կմ, ծովի մակարդակից գտնվում է 1900 մ բարձրության վրա: Գյուղի հիմնադրման ստույգ տարեթիվը հայտնի չէ, սակայն պատմագրությունը վկայում է, որ գյուղը, որպես բնակավայր, գոյություն է ունեցել Ք.ա. 2-րդ հազարամյակից: 13-րդ դարի պատմիչ Ս. Օրբելյանը Վայոց ձոր գավառի 92 գյուղերի ցուցակում Կեչուտը նշում է Երերունք և Ջերմուկ բնակավայրերի կողքին՝ 6 միավոր հարկաբաժնով, և ավելացնում, որ գյուղն ունի հազար տարուց ավելի պատմություն և երբեմն գործել է Ղուշչի, Կուշչի, Կուշչի-Բիլաք անուններով: Գյուղի մեջ մինչև անցյալ դարի 20-ական թվականները պահպանվել էին երեք եկեղեցիներ: Նախնիների մի մասը տարբեր ժամանակներում այստեղ են տեղափոխվել Նախիջևանի՝ Ջնաբերդ և Զանգեզուրի տարբեր գյուղերից: Մեր օրերում Կեչուտի բնակիչները հիմնականում զբաղվում են հացահատիկային և կերային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղում կա 2 մատուռ:

Գնդեվազ գյուղի հեռավորությունը Ջերմուկից 12 կմ է, մարզկենտրոնից՝ 30կմ, մայրաքաղաքից՝ 163 կմ, ծովի մակարդակից գտնվում է 1850 մ բարձրության վրա: Գնդեվազը պատմական Հայաստանի Սյունիք աշխարհի Վայոց Ձոր գավառի հնագույն բնակավայրերից է: Առաջին գրավոր հիշատակությունը Սիսական տան մեծ պամիչ Ս. Օրբելյանինն է, ուր ասվում է, որ Սյունաց Սոփի իշխանուհին Վայոց Ձորի Գնդեվանք եկեղեցին կառուցելու հետ (936 թ) հիմնել է նաև համանուն գյուղը և նվիրել վանքին: Չնայած պատմիչի այս տեղեկությանը՝ տարածքի պատմամշակութային որոշ հուշարձաններ թույլ են տալիս պնդելու, որ բնակավայրը շատ ավելի հին է: Պատմական հնություններից են Գնդեվազում գտնվող Սբ. Աստվածածին քարաշեն եկեղեցին (1686 թ.) և 11-րդ դարի ջրանցքը: Գնդեվազի ջրանցքը կառուցվել է 1008 թ, Սյունիքի Վասակ թագավորի ժամանակ: Վանքի վանահայր Սարգիսը Դիտավոր լեռան վրայից Ձկնարած գետի ակունքից ջուր է բերել տալիս: Ջրանցքի երկարությունը 22 կմ է: Այն ժամանակներում ջրանցքի ջրով ոռոգվել են մոտ 400 հա վանքապատկան հողեր, այժմ՝ մոտ 1000 հա: Գնդեվազի այժմյան վարչական տարածքում պահպանվել են պատմական մի քանի բնակատեղիների ավերակներ, որոնց ուսումնասիրությունը կարևոր է: Գյուղի ներկայիս բնակիչների նախնիները 19-րդ դարի առաջին կեսին Պարսկաստանի Խոյ և Սալմաստ գավառներից Վայոց Ձորի Խաչիկ, Գնիշիկ, Արենի գյուղերում վերաբնակված, ապա մասամբ Գնդեվազ տեղափոխված բնակիչների սերունդներն են: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ, դաշտավարությամբ և այգեգործությամբ: Գնդեվազից 2 կմ հարավ-արևմուտքում է գտնվում «Գնդեվանք»-ի համալիրը (X-XVII դարեր) և իջևանատունը (X-XIII դարեր), գյուղի հյուսիսային մասում՝ XVII-XVIII դարերի պարիսպը, 1 կմ հյուսիս՝ Սբ. Խաչ մատուռը (XIX դար), ավերակ եկեղեցին (XVII-XVIII դարեր), բերդի ավերակներ (ուշ միջնադար) և XI-XIX դարերի խաչքարեր:

1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակչության թիվը կազմում է 8055 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 4085 և կանայք՝ 3970:

Բնակչության տարիքային և սոցիալական կազմն այսպիսին է՝
- 0-17 տարեկան – 1569 մարդ
- 18-62 տարեկան – 5186 մարդ
- 63 և ավելի տարեկան – 1300 մարդ
- կենսաթոշակառուների թիվը – 1730 , այդ թվում տարիքային և աշխատանքային թոշակառուներ՝ 1350մարդ
- հաշմանդամներ – 380 մարդ,
- աշխատունակներ – 5386 մարդ
- զբաղվածներ – 4423 մարդ
- գործազուրկներ – 763 մարդ, այդ թվում գրանցված՝ 276 մարդ, չգրանցված՝ 487 մարդ
- տնային տնտեսությունների թիվը – 1855
- ընտանեկան նպաստի պետական համակարգում հաշվառված ընտանիքների թիվը – 338, այդ թվում նպաստառու ընտանիքների թիվը՝ 203:

Աղյուսակ 1-ում ներկայացվում է համայնքի բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները, *Աղյուսակ 2-ում* ներկայացվում է համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները՝ ըստ առանձին բնակավայրերի, առ 01.01.2022 թ.:

Աղյուսակ 1

Հ/h	**Բնակավայրի անվանումը**	**Մշտական բնակչության թվաքանակը /մարդ**	**Մշտական տնային տնտեսությունների թվաքանակը** , տ/տ	**Առկա տնային տնտեսությունների թվաքանակը**, տ/տ
1.	Ջերմուկ	6108	1427	1068
2.	Կեչուտ	1086	242	202
3.	Գնդեվազ	861	186	172
	Ընդամենը	*8055*	1855	1442

Աղյուսակ 2. **Համայնքի մշտական բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները** (01.01.2022 **թ**. **դրությամբ**)

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնք	Այդ թվում՝ ըստ համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի		
			Ջերմուկ	Կեչուտ	Գնդեվազ
1.	մշտական բնակչության թիվը, այդ թվում՝	8055	6108	1086	861
	Տղամարդիկ	4085	3044	576	465
	Կանայք	3970	3064	510	396
	0-17 տարեկան	1596	1176	217	176
	18-62 տարեկան	5186	3914	719	553
	63 և ավելի տարեկան	1300	1018	150	132
2.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	1730	1418	163	149
	Տարիքային և աշխատանքային	1350	1065	155	130
3.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	349	263	29	15
4.	Հաշմանդամներ, այդ թվում՝	266	250	80	50
5.	Աշխատունակներ	5386	4033	750	603
6.	Զբաղվածներ	4423	3249	681	493
7.	Գործազուրկներ	763	484	144	135
8	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	338	281	34	23
9	Արցախյան պատերազմներում զոհվածների ընտանիքների թիվը	52	43	6	3

1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

2021թ. դեկտեմբերի 5-ին Ջերմուկ համայնքում կայացած ՏԻՄ-երի ընտրությունների արդյունքում ընտրվել են համայնքի ավագանին՝ բաղկացած 15 անդամից, և համայնքի ղեկավարը, ովքեր կազմավորել են համայնքապետարանի աշխատակազմը՝ բաղկացած 25 աշխատակցից: Ստորև բերվում է համայնքի ղեկավարի և աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների հաստիքացուցակը և աշխատավարձերի պաշտոնային դրույքաչափերը, որոնք հաստատվել են համայնքի ավագանու 11.01.2022 թ. N 2-Ա որոշմամբ (Աղյուսակ 3)՝

Աղյուսակ 3. **Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ**

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ				
Հ/հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորները	Դրույքի չափը (դրամ)	Ընդամենը աշխատավարձ (դրամ)
1	2	3	4	5
Քաղաքական պաշտոններ				
1	Համայնքի ղեկավար	1	440,162	440,162
2	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1	358,400	358,400
3	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	264,600	264,600
Հայեցողական պաշտոններ				
4	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	257,500	257,500
5	Համայնքի ղեկավարի օգնական	1	257,500	257,500
Համայնքային վարչական պաշտոններ				
6	Վարչական ղեկավար	2	302,685	605,370
	Ընդամենը	*7*		*2,183,532*
Աշխատակազմ *(համայնքային ծառայության պաշտոններ)*				
7	Աշխատակազմի քարտուղար	1	358,400	358,400
8	Գլխավոր մասնագետ-ճարտարապետ	1	257,500	257,500
9	Գլխավոր մասնագետ	2	257,500	515,000

10	Գլխավոր մասնագետ	1	185,600	185,600
11	Առաջատար մասնագետ	3	187,300	561,900
12	1-ին կարգի մասնագետ	2	152,500	305,000
Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին				
13	Բաժնի պետ	1	323,000	323,000
14	Գլխավոր մասնագետ–գնումների համակարգող	1	257,500	257,500
15	Առաջատար մասնագետ	3	187,300	561,900
	Ընդամենը	*15*		*3,325,800*
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐՈՂՆԵՐ				
16	Հողաշինարար	1	238,000	238000
17	Չափագրող	1	187,300	187300
18	Անասնաբույժ	2	119,000	238,000
	Ընդամենը	4		*663,300*
Տեխնիկական սպասարկման անձնակազմ				
19	Համակարգչային սարքեր սպասարկող	1	187,300	187,300
20	Տեղեկատվական համակարգի օպերատոր	1	187,300	187,300
21	Վարորդ	1	187,300	187,300
22	Հավաքարար	1	187,300	187,300
23	Հավաքարար	1.5	119,000	178,500
24	Տնտեսվար	1	119,000	119,000
	Ընդամենը	*6.5*		*1,046,700*
	Ընդամենը/աշխատակազմ	*25.5*		*5,035,800.0*
ԸՆԴՀԱՆՈՒՐԸ՝		*32.5*		*7,219,332.0*

Գծապատկեր 1-ում ներկայացված է Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը:

Համայնքում գործում են՝

1. «Ջերմուկի համայնքի «Զատիկ» մանկապարտեզ ՆՈՒՀ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (ՀՈԱԿ)

2. «Ջերմուկ համայնքի Ռոմանոս Մելիքյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (ՀՈԱԿ)

3. «Ջերմուկ համայնքի Շառ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (ՀՈԱԿ)

4.«Ջերմուկ համայնքի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (ՀՈԱԿ)

5.«Ջերմուկի համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (ՀՈԱԿ)

6. «Գնդեվազ համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (ՀՈԱԿ)

7. «Ջերմուկի համայնքի ճոպանուղի» համայնքային հիմնարկ

Համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների և համայնքային հիմնարկների աշխատակիցների հաստիքացուցակը և աշխատավարձերի պաշտոնային դրույքաչափերը ներկայացված են Հավելված 2-ում:

1.4 ***ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ***

Համայնքի սեփականությունն են հանդիսանում նրա կազմի մեջ մտնող նախկին համայնքների սեփականություն համարվող գույքը, որի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ: Համայնքի սոցիալ-տնտեսական յուրաքանչյուր ենթակառուցվածքի վիճակի գնահատումը կատարվել է՝ օգտագործելով Ներդիր 1-ում բերված գնահատման չափանիշները (գնահատականները):

Ներդիր 1. Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքի վիճակի գնահատականներ

ա) գերազանց, եթե ենթակառուցվածքը վերջերս է կառուցվել կամ վերանորոգվել, գործում է անխափան.
բ) լավ, եթե ենթակառուցվածքն իր շահագործմանը խոչընդոտող լուրջ թերություններ չունի.
գ) բավարար, եթե ենթակառուցվածքը դեռևս գործում է, բայց արդեն կապիտալ նորոգման կարիք ունի.
դ) վատ, եթե ենթակառուցվածքը գործում է ամենացածր արտադրողականությամբ կամ բոլորովին չի գործում.
ե) շատ վատ, եթե ենթակառուցվածքը քայքայված է, այն պետք է քանդել կամ փոխարինել ուրիշով:

Հավելված 3-ում բերված է 01.01.2022թ. դրությամբ համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը և վիճակը՝ ըստ առանձին բնակավայրերի: Ի լրումն նշյալ

ցանկի՝ *Աղյուսակ 4-ում* ամփոփ ձևով ներկայացված է համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերում սոցիալ-տնտեսական հիմնական ենթակառուցվածքների առկայությունը և ընդհանուր վիճակը:

Աղյուսակ 4. **Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների վիճակի գնահատում**

Հ/հ	Ենթակառուցվածքի նվանումը	Ջերմուկ		Կեչուտ		Գնդեվազ	
		առկա	վիճակը	առկա	վիճակը	առկա	վիճակը
1.	Աշխատակազմի վարչական շենք	+	լավ	+	բավարար	+	բավարար
2.	Ներբնակավայրային փողոցներ	+	լավ	+	լավ	+	լավ
3.	Միջբնակավ. ճանապարհներ	+	բավ	+	Բավ.	+	Բավ.
4.	Ոռոգման համակարգ	-	-	-	-	+/մասամբ/	լավ
5.	Աղբավայր	+	վատ	-	-	-	-
6.	Աղբատար մեքենա	+	գերազանց	-	-	-	-
7.	Ջրամատակարարման համակարգ	+	գերազանց	+	լավ	+	բավ
8.	Ջրահեռացման համակարգ	+	գերազանց	+	լավ	+	լավ
9.	Փողոցների լուսավորման համակարգ	+	գերազանց	+	գերազանց	+	գերազանց
10.	Բուժկետ, ամբուլատորիա	+	բավարար	-	-	+	վատ.
11.	Մարզադպրոց	+	գերազանց	-	-	-	-
12.	Գրադարան	+	գերազանց	-	-	-	-
13.	Մշակույթի տուն/կենտրոն, ակումբ	-	-	+	վատ	+	լավ
14.	Արվեստի, գեղարվեստի դպրոց	+	լավ	+	լավ	-	-
15.	Մանկապարտեզ	+	գերազանց	+	գերազանց	+	գերազանց
17.	Արտադպրոցական այլ հիմնարկ	-	-	-	-	-	-
18.	Պատկերասրահ	+	լավ	-	-	-	-
19.	Ճոպանուղի	+	բավարար	-	-	-	-
20.	Հանրակրթական դպրոցներ	+	լավ	+	լավ	+	լավ

1.5 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գործող ոչ համայնքային ենթակայության կազմակերպությունները ներկայացված են Հավելված 4-ում: Նշված կազմակերպությունների հետ ՏԻՄ-երի համագործակցությամբ արվում է ամեն հնարավորը տվյալ ոլորտներում ծառայությունների արդիականացման և արդյունավետության բարձրացման նպատակով:

Միաժամանակ, համայնքում գործում է նաև «Ապագայի շողեր», «Ջերմուկի զարգացման կենտրոն» և «Համայնքային նախաձեռնություն հանուն զարգացման» ՀԿ-ները:

*1.6 ***ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ***

Համայնքի Ջերմուկ քաղաքն ունի գլխավոր հատակագիծ, որը հաստատվել է համայնքի ավագանու 2014 թվականի հունվարի 16-ի N 8-Ն որոշմամբ: 2009 թվականի դեկտեմբերի 23-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Ջերմուկի քաղաքապետարանի և շվեյցարական ԹայգերՌեվ Սվիս ընկերության միջև կնքվել է Ջերմուկի գլխավոր հատակագծի մշակման պայմանագիր, որում նախատեսված աշխատանքները ընկերության կողմից ամբողջությամբ կատարվել են, կյանքի է կոչվել Ջերմուկում քաղաքաշինության զարգացման, այսպես կոչված, շվեյցարական ծրագիրը: Ջերմուկ քաղաքի աջափնյա հատվածը ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 728-Ն որոշմամբ առանձնացվել է որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածք և այստեղ քաղաքաշինական գործունեության իրականացվում է ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 792-Ն որոշմանը համապատասխան: Միաժամանակ, Ասիական Զարգացման Բանկի ֆինանսական աջակցությամբ «Կայուն քաղաքաշինական ներդրումային ծրագրի» շրջանակում Ջերմուկ քաղաքի տարածքում առաջնային ենթակառուցվածքային ծրագրեր իրականացնելու համար կազմվել է Ջերմուկի քաղաքաշինության զարգացման ծրագիր: Ոլորտի ընթացիկ աշխատանքներում առաջացած որոշակի խոչընդոտներից ելնելով (հատակագծի անհամապատասխանություն կադաստրային քարտեզի հետ, կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալներ) անհրաժեշտաբար համայնքի ավագնու կողմից 2016 թվականի օգոստոսի 18-ի N 44-Ա որոշմամբ հավանություն է տրվել Ջերմուկի համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու նախագծման առաջադրանքին: Վերջին հինգ տարիների կտրվածքով կառուցապատողներին տրվել են թվով 97 ճարտարապետահատակագծային առաջադրանքներ և 190 շինթույլտվություններ, որոնցից՝ 65 ՃՀԱ և 49 շինթույլտվություն Ջերմուկ քաղաքում: Համայնքի գյուղական բնակավայրերը չունեն գլխավոր հատակագծեր և քաղաքաշինական ծրագրային այլ փաստաթղթեր:

Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի «Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին» N 51 որոշման համաձայն համայնքային սեփականություն են համարվում ներհամայնքային բոլոր փողոցները, հրապարակները, ներհամայնքային նշանակության ճանապարհները, կամուրջները, աղբավայրերն ու գերեզմանատները: Վերը նշված որոշմամբ համայնքներին որպես սեփականություն տրվել է նաև ներհամայնքային նշանակության ջրամատակարարման, ջրահեռացման, ջերմամատակարարման և ոռոգման համակարգերը: Ջերմամատակարարման համակարգերը անկախացման առաջին տարիներին, երբ սոցիալ-տնտեսական վիճակը ծայրահեղ է եղել, հնարավոր չի եղել շահագործել, դրանք լուծարվել են, գույքը՝ շենք-շինություններով մասնավորեցվել է: Ջրամատակարարման, ջրահեռացման և ոռոգման համակարգերը Ջերմուկ քաղաքում մինչև 2016 թվականը անհատույց օգտագործման է տրամադրվել «Հայջրմուղկոյուղի» ՓԲ ընկերությանը: 2016 թվականի մայիսին ՀՀ կառավարության արձանագրային որոշման

համաձայն համայնքի ավագանին նվիրատվությամբ համակարգերի սեփականության իրավունքը փոխանցել է ՓԲԸ-ին: Այժմ այդ համակարգերը տնօրինվում է վերջինիս իրավահաջորդ «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության կողմից: Այլ է պատկերը գյուղական բնակավայրերում. Կեչուտում ջրամատակարարման, ջրահեռացման և ոռոգման համակարգերը կյանքի են կոչվել USAID-ի «Փրկեցեք երեխաներին » ներդրումային ծրագրի շրջանակներում՝ 2002 թվականին, գյուղն ինքն է տնօրինում համակարգը: Գնդեվազ գյուղում այդ համակարգերը տնօրինվել են գյուղապետարանների կողմից: Ընթացիկ նորոգման և ընդլայնման կարիք ունեն Կեչուտի և Գնդեվազի ոռոգման համակարգերը: Գնդեվազ գյուղում վթարային է ինչպես ջրամատակարարման, այնպես էլ կոյուղու համակարգը, այն կապիտալ նորոգման կարիք ունի: Խմելու ջրով ապահովված են համայնքի բոլոր բնակավայրերի դպրոցները, մանկապարտեզները, համայնքային ենթակայության բոլոր կազմակերպությունները և այլն:

Համայնքը հիմնականում գազաֆիկացված է՝ Ջերմուկ քաղաքն ու Գնդեվազ գյուղը՝ ամբողջությամբ:

Համայնքն ընդհանուր առմամբ բարեկարգ և կանաչապատ է, հատկապես՝ Ջերմուկ քաղաքը, որը 2008 թվականից ի վեր հայտարարված է զբոսաշրջության կենտրոն և ՏԻ մարմինների ուշադրության մեծագույն մասը նվիրվել է քաղաքը բարեկարգելուն, կանաչապատելուն, զբոսաշրջության արդի միջազգային չափանիշներին համապատասխան դարձնելուն: Գյուղական բնակավայրերը կանաչապատման կարիք չունեն, բարեկարգ և գրեթե քաղաքատիպ են գյուղական բնակավայրերը:

Համայնքում աղբահանությունն իրականացվում է կենտրոնացված ձևով՝ «Ջերմուկի համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից: «Ջիրակ աղբավայրը» սպասարկում է Ջերմուկ քաղաքը, Կեչուտ և Գնդեվազ գյուղերը: Վերը նշված ՀՈԱԿ-ին Ջերմուկի համայնքի ավագանու որոշմամբ ամրակցված է գույք՝ մեքենամեխանիզմներ, որոնցով իրականացվում է քաղաքի աղբահանությունն ու սանմաքրումը: ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերով թարմացվել է ՀՈԱԿ-ի ավտոպարկը: Ձեռք են բերվել ինչպես աղբահանության, այնպես էլ բազմագունկցիոնալ և գյուղատնտեսական աշխատանքների համար նախատեսված մի շարք մեքենաներ, տրակտորներ և մեխանիզմներ: Սա ապահովում է մատուցվող ծառայությունների բարձր որակ, ինչպես նաև համայնքի բնակչին հնարավորություն է տալիս ավելի մատչելի գնով օգտվելու գյուղատնտեսական աշխատանքներ կատարող տեխնիկաներից:

Արտաքին լուսավորվածությամբ լիովին ապահովված է Ջերմուկ քաղաքը: Կեչուտ և Գնդեվազ գյուղերում արտաքին լուսավորությամբ ապահովված է փողոցների մեսամասնությունը՝ մոտ 80 տոկոսը: Ջերմուկ քաղաքի բոլոր փողոցներում և բակային հատվածներում տեղադրված են հենասյուներ և բարձրորակ էներգայախնող լուսատուներ: Ջերմուկ քաղաքը 2015 թվականին փետրվարի 11-ին Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի և Ջերմուկի քաղաքապետարանի միջև կնքվել է էներգախնայողության ծառայությունների համաձայնագիր, որի համաձայն հիմնադրամը Հայաստանի Հանրապետության անունից Ջերմուկ քաղաքում իրականացրել է փողոցային լուսավորության էներգախնայողության միջոցառումներ:

Համայքում առկա գերեզմանատները ներկայացված են ստորև՝

հ/հ	բնակավայրը	Իրավական ռեժիմը	Մակերեսը, հա	ծանոթություն
1	Ջերմուկ	փակ	մոտ 1	Գտնվում է Ակունք կոչվող գյուղատեղիում , հին գերեզմանատեղի է:
2	Ջերմուկ	բաց	1,65	ճանապարհը ծայր աստիճան անմխիթար վիճակում է, տեղումների դեպքում՝ անանցանելի: Ճանապարհի հիմնանորոգումը համայնքի գերխնդիրներից մեկն է, ներառնված է հրատապ լուծում պահանջող ծրագրերի ցանկում: Անհրաժեշտ է իրականացնել ցանկապատում:
3	Գնդեվազ	մասնակի փակ	1,5	
4	Գնդեվազ	մասնակի փակ	2,5	
7	Կեչուտ	մասնակի փակ	1,79	Գերեզմանատան ներքին քայլուղիները հիմնանորոգման կարիք ունեն: Անհրաժեշտ է իրականացնել ցանկապատում:

Բոլոր գերեզմանատները (բացի փակերից) կարիք ունեն ընդլայնման և պարսպապատման: Դրանք հատուկ պահպանվող տարածքներ են, գործառնական նշանակությամբ՝ կոմունալ օբյեկտների հողեր:

1.7 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքում և Կեչուտ գյուղում միասին կան բազմաբնակարան 111 շենքեր՝ 2637 բնակարաններով: Բազմաբնակարան շենքերի բակերն ասֆալտապատ են, բացառությամբ 2 շենքի: Բազմաբնակարան շենքերի բնակարանների շուրջ 95 տոկոսը սեփականաշնորհված է: Համայնքի բնակֆոնդի ընդհանուր մակերեսը 196,2 հազ. քմ է, որից բնակելի մակերեսը կազմում է 143,2 հազ քմ: 2637 բնակարանների մեծ մասը սեփականաշնորհված են, մնացածը՝ համայնքային սեփականության են: Վերջին 20 տարում համայնքում բնակարանաշինություն չի իրականացվել և սկսած 90-ական թվականներից գնալով քաղաքում աճել է բնակարանի կարիք ունեցող ընտանիքների թիվը: Այն հիմնականում պայմանավորված է քաղաքի զարգացման, բնական աճի և Ջերմուկում աշխատանքի անցած մարդկանց, ինչպես նաև 44-օրյա պատերազմի հետևանքով արցախահայերի ներհոսքի հետ: Ներկա պահին համայնքում բնակարանային կարիք ունեցող ընտանիքների թիվը գերազանցում է 400-ը: Նրանց մեծ մասը՝ հատկապես երիտասարդ ընտանիքները, բնակվում են վարձակալությամբ: Համայնքում վթարային շենքեր չկան: Հիմնանորոգվել են Ջերմուկ

քաղաքի բազմաբնակարան բոլոր շենքերի տանիքները, փոխարինվել են մուտքերի դռները, մուտքերում կատարվել է մասնակի վերանորոգում: Վերանորոգման կարիք ունեն Կեչուտի բնակելի շենքերի տանիքները: Մուտքերի ամբողջական վերանորոգման կարիք ունեն Ջերմուկ քաղաքի և Կեչուտ գյուղի բոլոր 111 շենքերը: Համայնքում ձևավորված համատիրություններ չկան, ուստի բազմաբնակարան շենքերի կառավարումն իրականացնում է համայնքապետարանը: Վերելակների թիվը 2-ն է՝ Ջերմուկ քաղաքի Ձախափնյակի բազմահարկ 26/Ա և 26/Բ շենքերում, դրանց վիճակը բավարար է:

Համայնքի գյուղական բնակավայրերում առկա են 226 առանձնատներ՝ մոտ 18080 քմ մակերեսով: Կան մեծ թվով ոչ բնակելի տարածքներ համայնքի բոլոր բնակավայրերում, դրանց մի մասը համարվում են իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց, համայնքային, պետական սեփականություն:

1.8 ***ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ***

Ջերմուկ համայնքի վարչական տարածքը կազմում է 19928.39 հա, որից՝

- գյուղատնտեսական նշանակության հողեր – 10316.47 հա,
- Բնակավայրերի նշանակության հողեր – 425.33 հա,
- Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտ. նշանակութ. օբյեկտների-388.13 հա

- Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակ. օբ.- 82.66

-Հատուկ պահպանվող տարածքների – 4589.34 հա,
- անտառային և ջրային ֆոնդերի հողեր – 3915.75 հա,
- Ջրային հողեր- 210.71 հա

1991թ. հանրապետությունում իրականացված հողի համատարած սեփականաշնորհմանը մասնակցել են համայնքի գյուղական բնակավայրերի բոլոր տնային տնտեսությունների ընտանիքները: Համայնքի սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը կազմել է՝

Կեչուտում՝ 2 հա Գնդեվազում՝ 1,3 հա

Կարմրաշենում՝ 4 հա Հերհերում՝ 2 հա

Համայնքի սեփականություն համարվող հողերը կազմում են 6442.62 հա, որոնցից 42.24 հա վարելահողերը և մոտ 896.42 հա արոտավայրերը վարձակալությամբ տրամադրված է համայնքի բնակիչներին:

1.9 ***ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ***

Համայնքի գյուղական բնակավայրերի բնակչության 95%-ը զբաղվում է գյուղատնտեսությամբ:

Գյուղատնտեսական նշանակության հողերը բաշխված են հետևյալ կերպ՝

Տեսակը	*Ջերմուկ, Կեչուտ*	*Գնդեվազ*
Վարելահող	673.16	541.88

Խոտհարք	637.01	124.62
Արոտավայր	2311.79	4443.40
Այլ հողատեսք	1017.24	485.12

Համայնքի վարելահողերում ցանվում են հացահատիկային մշակաբույսեր՝ ցորեն, գարի և այլ կուլտուրաներ: Սակայն հողատարածքների ջրովի չլինելու պատճառով համայնքաբնակները մեծ եկամուտներ չեն ստանում: Հողատեսքերի դիրքադրությունը Կեչուտում բարենպաստ է անասնապահության, իսկ Գնդեվազ գյուղում՝ այգեգործության համար: Այգեգործությունն ու անասնապահությունը հանդիսանում են Ջերմուկ համայնքի գյուղական բնակավայրերի տնտեսական զարգացման կանխորոշ ոլորտ: Սակայն այս երկու ոլորտները ներկայումս ունեն աճի միջին տեմպ, որը պայմանավորված է ոլորտների ցածր կապիտալացման աստիճանով ու վերամշակման տեխնոլոգիաների բացակայությամբ:

Գյուղացիները զբաղվում են նաև անասնապահությամբ, սակայն խոշոր ֆերմերային տնտեսությունները սակավաթիվ են: Հիմնականում յուրաքանչյուր տնտեսություն իր արտադրանքը սպառում է իր տնտեսության ներսում: Վերջին տարիներին Կեչուտ բնակավայրում USAID-ի «Փրկենք երեխաներին» ծրագրով կառուցվել է ոռոգման համակարգ և թարմացվել է անասունների ջրելատեղիները: Գնդեվազ գյուղում 2015 թվականից գործում է «Էկո Ֆարմ», ապա՝ «Երեմյան» ՍՊԸ-ի կաթ և միս արտադրող անասնապահական համալիրը: 300 կթու կովերի համար նախատեսված համալիրն իր տեխնիկական հագեցվածությամբ չի զիջում Եվրոպական և Ամերիկյան որակի և կառավարման չափորոշիչներին:

Կեչուտ գյուղում պտղատու այգիները, ի տարբերություն Գնդեվազի, միայն տնամերձ են: Գնդեվազը առավելապես մասնագիտացված է այգեգործության մեջ, մշակվում է բարձրակարգ ծիրան, սալոր, խնձոր, Կեչուտում այգեգործների թիվը քիչ է, մշակում են խնձոր, տանձ, նաև բանջարաբոստանային կուլտուրաներ՝ հիմնականում՝ կարտոֆիլ, բերքատվությունը բարձր չէ՝ ոչ բարենպաստ կլիմայական գործոնների պատճառով: Գյուղերում տարածված է նաև մեղվապահությունը:

Ոռոգման ջրի սակավությունը, ցանցի չբավությունը դժվարացնում է գյուղատնտեսական մթերքների արտադրության կազմակերպումը: Խնդիր է նաև դրանց իրացումը:

Գյուղական բնակավայրերում դաշտամիջյան ճանապարհների վիճակը վատ է, դրանք գրունտային ճանապարհներ են, որոնց դժվարանցանելի են դառնում անձրևառատ օրերին:

Հավելված 5-ում ներկայացված է համայնքում առկա անասնագլխաքանակի վերաբերյալ տվյալներն՝ ըստ համայնքի կազմի մեջ մտնող առանձին բնակավայրերի:

1.10 ***ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ***

Համայնքում շրջակա բնական միջավայրի պահպանության առումով առաջնային խնդիր է համայնքի սանմաքրումն ու աղբահանությունը: Համայնքում այն կատարվում է կենտրոնացված ձևով՝ «Ջերմուկի համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի միջոցով, աղբը տեղափոխվում է «Ձիրակ» աղբավայր: ՀՈԱԿ-ն իր գործառույթներն իրականացնում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան համայնքի ավագանու կողմից հաստատված կարգի և սխեմայի համաձայն՝ ամեն օր (ամռան

ամիսներին՝ մի քանի անգամ, ձմռան ամիսներին կատարում է ձնամաքրման աշխատանքեր): ՀՈԱԿ-ի գործառույթների մեջ է մտնում նաև համայնքի կանաչապատ տարածքների խնամքը և պահպանությունը:

Համայնքը բացառիկ է իր հողերի, ջրերի, օդի և շրջակա միջավայրի մաքրությամբ: Այստեղ չկան կենսոլորտն աղտոտող արդյունաբերական ձեռնարկություններ, չեն լինում արտադրական թափոններ, վնասակար նյութերի արտանետումներ ու արտահոսքեր և այլն: Գործող կազմակերպությունները խստորեն պահպանում են բնօգտագործման կանոնները:

Համայնքը հարուստ է անտառներով, որոնք գտնվում են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Վայոց ձորի անտառտնտեսության հսկողության տակ, վերջինս իրականացնում է նաև դրանց պահպանությունը, պաշտպանությունը, վերարտադրությունը և խնամքը:

Ջերմուկ քաղաքի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերը պատկանում են «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերությանը, իսկ գյուղական բնակավայրերինը պատկանում են համայնքին: Ջերմուկ քաղաքում այդ համակարգերը վարկային ծրագրի շրջանակներում հիմնովին վերակառուցվել են 2014-2015 թթ ընթացքում, մինչդեռ ոլորտը խնդիրներ ունի գյուղերում. Ջերմուկ համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերից միայն Ջերմուկ քաղաքն ունի կեղտաջրերի մաքրման կայան:

Շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված կարևորագույն քայլ էր 2014-2015 թթ. ընթացքում Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան ֆինանսական աջակցությամբ Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի հայաստանյան մասնաճյուղի (ԿՏԲԿ) կողմից Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքի «Շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրի» (ՇՄՊՏԳԾ) մշակումը: Ծրագիրը ոլորտի արժեքավոր և ծավալուն փաստաթուղթ է , որը հավանության է արժանացել և հաստատվել է Ջերմուկի համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 27-ի N 8-Ա որոշմամբ:

Ծրագիրը նպատակ ունի

" Նպաստել համայնքի շրջակա միջավայրի իրավիճակի բարելավմանը հստակ ռազմավարությունների կիրառման միջոցով:

" Բարձրացնել բնապահպանական խնդիրների վերաբերյալ համայնքի անդամների իրազեկվածության աստիճանը:

" Հզորացնել տեղական ինքնակառավարման մարմինների և ՀԿ-ների կառավարման և բնապահպանական ծրագրերի իրականացման, ինչպես նաև առկա բնապահպանական խնդիրների լուծման կարողությունները:

" Բացահայտել հիմնական բնապահպանական խնդիրները, գնահատել նրանց առաջնայնությունը:

Համայնքում բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

" գյուղական բնակավայրերի համար ստեղծել աղբավայր
" ավելացնել համայնքի կանաչապատ տարածքները,

- բարեկարգել զբոսայգին,
- բնակավայրերում տեղադրել ստանդարտներին համապատասխան աղբամաններ,
- գյուղմթերքների վաճառքի համար կառուցել փակ շուկա,
- կառուցել սպանդանոց՝ կենդանիների մորթը թույլատրված նորմերում կատարելու համար,
- համայնքի փողոցներում իրականացնել ծառատունկ,
- ավելացնել համայնքի կանաչապատ և ծաղկապատ տարածքները,
- ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում՝ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար անցկացվող սեմինարների, դասընթացների, տեսագովազդների, ցուցանակների և հանրային իրազեկման այլ միջոցներով:

1.11 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 59 կմ (27982 կմ՝ Ջերմուկ, 4,5 կմ՝ Կեչուտ, 6 կմ՝ Գնդեվազ): Միջպետական ճանապարհից մինչև Ջերմուկ քաղաք և Կեչուտ գյուղ 24 կմ է, մինչև Գնդեվազ՝ 12 կմ: Դեպի Ջերմուկ, Գնդեվազ և Կեչուտ տանող ճանապարհը ասֆալտապատ է: Համայնքային ենթակայության կամուրջների քանակը 12 է, այլ ենթակառուցվածքներից՝ կանգառներ՝ 10 հատ, աղբավայր՝ 1,5 հա, արհեստական լճակներ՝ 3 հատ, խաղահրապարակներ՝ 3 հատ, ջրային կասկադ՝ 400 քմ:

Համայնք բերող հիմնական ուղին միջպետական նշանակության Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի ճանապարհն է, որի Վայք-Հարթավան հատվածից թեքվում են դեպի համայնքի գյուղական բնակավայրեր տանող Հ-42 և Հ-43 հանրապետական նշանակության ճանապարհները և Արփա գետի աջ ու ձախ ափերով բարձրանում դեպի Ջերմուկ: Հին Ջերմուկն ընկած է նոր Ջերմուկից դեպի հարավ 3 կմ հեռավորության վրա: Քաղաքի 2 մասերը միմյանց կապված են երկու ճանապարհներով: Ջերմուկի հին ճանապարհը, որն ընկած է գետի աջ ափին, դեպի հարավ անցնում է նաև Կեչուտի ջրամբարի մոտով և ամբարտակի վրայով միանում ձախակողմյան ճանապարհին: Նոր Ջերմուկը մեկ փողոցի քաղաք է. փողոցը կոչվում է Ս. Շահումյանի անունով, ունի 8 մ լայնությամբ երթևեկելի մաս և 2-ական մետր լայնությամբ մայթեր: Ձախափնյա հատվածի հիմնական փողոցը Ազատամարտիկների փողոցն է: Համայնքում ներկայումս չկա միջբնակավայրերին հասարակական հասարակական տրասպորտի արդյունավետ համակարգ, ինչը զգալի խոչընդոտ է համայնքի բնակիչների տեղաշարժի համար: Ջերմուկի և Երևանի միջև գոյություն ունի կանոնավոր միկրոավտոբուսային երթուղի՝ օրական մեկ անգամ, տոմսի արժեքը կազմում է 2000 դրամ: Կանոնավոր միկրոավտոբուսային երթուղիներ կա Ջերմուկի և մարզկենտրոն Եղեգնաձորի միջև՝ օրական մեկ անգամ, երթի արժեքը՝ 700 դրամ: Ներքաղաքային ուղևորափոխադրում իրականացնողը «Նար-Սամ» ՍՊԸ-ն է: Համայնքի տաքսի ծառայությունները ապահովվում են մասնավոր մատակարարների կողմից:

Ջերմուկ քաղաքում 2007 թվականից գործում է շվեյցարական «Լայթներ» ընկերության կողմից կառուցված 200տեղանոց բազկաթոռային ճոպանուղին: Ճոպանուղու երկարությունը 1000 մետր է, իսկ ստորին և վերին կետերի տարբերությունը 400 մետր է: Վերին կետը գտնվում է 2480 մ բարձրության վրա: Գործում է նաև լեռնադահուկային երկու երթուղի՝ 1450 մ և 1550 մ երկարությամբ: Ճոպանուղու ստորին կետում գործում են դահուկների վարձույթի ծառայություն, ռեստորան-սրճարան, ավտոկայանատեղի:

Համայնքին ներբնակավայրային փողոցների և համայնքային սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տվյալները՝ ըստ համայնքի կազմի մեջ մտնող առանձին բնակավայրերի ներկայացված է հավելված 3-ում: Համայնքաբնակների սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների քանակները, ըստ բնակավայրերի, ներկայացված են հավելված 6-ում:

1.12 ***ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ***

Ջերմուկ համայնքում առևտուրն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի և մասնավոր կազմակերպությունների կողմից: Համայնքում գործում են հանրային սննդի և պարենային խանութներ, հացի փռեր, հանրային սննդի սպասարկման օբյեկտներ, հյուրանոցներ, հյուրատներ, առողջարաններ, պանիր և կաթ արտադրող ընկերություններ և անասնապահական համալիր (գ. Գնդեվազ), հանքային ջրերի գործարան, ճոպանուղի, բենզինի և գազի լցակայաններ (Ջերմուկ): Գնդեվազ բնակավայրում գործում է կոոպերատիվ, որը համալրված լինելով որոշակի սարքերով մատուցում է գյուղմթերքի վերամշակման՝ չրերի արտադրության, ծառայություններ: Ջերմուկ քաղաքի տարածքում գործում են մի շարք ՓՀԷԿ-եր:

Համայնքի տարածքում արտադրական, առևտրային և այլ ծառայություններ մատուցող կազմակերպությունների տվյալները ներկայացված են հավելված 7-ում՝ ըստ համայնքի կազմի մեջ մտնող առանձին բնակավայրերի:

1.13 ***ԿՐԹՈՒԹՅՈՒՆ***

Համայնքում գործում են կրթական հետևյալ օջախները՝

Կրթական հաստատությունը	Սովորողների թիվը	Աշխատողների թիվը
Ջերմուկ քաղաքի Մ. Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոց	188	27
Ջերմուկի կրթահամալիր	462	63
Կեչուտ գյուղի միջնակարգ դպրոց	246	36
Գնդեվազ գյուղի միջնակարգ դպրոց	77	25
«Ջերմուկ համայնքի Ռոմանոս Մելիքյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ	107	18
«Ջերմուկ համայնքի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ	265	23

Նախադպրոցական հետևյալ հաստատությունները՝

Հաստատությունը	Երեխաների թիվը	Աշխատողների թիվը
«Ջերմուկ համայնքի «Ջատիկ մանկապարտեզ» ՆՈՒՀ» ՀՈԱԿ	164	38

«Գնդեվազի համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ	23	10

Վերանորոգված և բարվոք վիճակում են գտնվում Ջերմուկի կրթահամալիրը, Կեչուտ և Գնդեվազ գյուղերի միջնակարգ դպրոցների շենքերը, վերանորոգման և կահավորման կարիք ունի Ջերմուկ քաղաքի Մ. Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոցի շենքը: Մանկապարտեզների երկու շենքներն էլ հիմնանորոգված են, ապահովված են ջրամատակարարմամբ, ջեռուցման համակարգով, գույքով, երեխաներին անհրաժեշտ պարագաներով, խաղալիքներով: Երկու մանկապարտեզներն էլ աշխատում են 8-ժամյա ռեժիմով, երեխաները քնում են մանկապարտեզում, սնվում են երեք անգամ: Համայնքի ավագանու որոշմամբ, մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողական ամսական վճարը կազմում է 5000 դրամ՝ Գնդեվազ և Կեչուտ գյուղերում, 7000 դրամ՝ Ջերմուկ քաղաքում: Մանկապարտեզների պահպանման մնացած ծախսերը սուբսիդավորվում է համայնքի բյուջեից: Արվեստի դպրոցներում գործում են դաշնամուրի, ջութակի, կիթառի, քանոնի, դհոլի, պարի, կերպարվեստի, դուդուկի և շվիի դասարաններ, դպրոցներն ամբողջությամբ գազաֆիկացված են, ջեռուցվում են: Վերանորոգման կարիք ունի «Ջերմուկ համայնքի Ռոմանոս Մելիքյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի շենքը:

1.14 ***ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ***

Համայնքում գործող մշակութային կազմակերպությունները հետևյալներն են՝

«Ջերմուկ համայնքի Ռոմանոս Մելիքյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ՝ դպրոցում սովորում են 107 աշակերտներ՝ դաշնամուրի, ջութակի, կիթառի, դհոլի, շվիի, վոկալի, կերպարվեստի և պարի դասարաններում: Աշխատողների թիվը՝ 18 է, որից բարձրագույն մասնագիտական կրթությամբ՝ 10: Դպրոցի շենքը տիպային է, ունի վերանորոգման կարիք, թարմացման կարիք ունեն նաև գույքն ու երաժշտական գործիքները: Դպրոցի հատկապես բարձր դասարանցիները պարբերաբար մասնակցում են փառատոնների, ունեն զգալի հաջողություններ: 2021 թվականին դպրոցի դհոլահարների խումբը «Արտ Մյուզիք» միջազգային մրցույթ փառատոնի դիպլոմակիր է: Նույն փառատոնի տարբեր մրցանակային տեղեր են զբաղեցրել նաև կերպարվեստի բաժնի սաները:

«Ջերմուկ համայնքի Շառ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ՝ դպրոցում սովորում են 265 աշակերտներ՝ դաշնամուրի, ջութակի, կիթառի, դհոլի, շվիի, ակորդեոնի, կերպարվեստի, փորագրության, ասեղնագործության և պարի դասարաններում: Աշխատողների թիվը՝ 23 է, որից բարձրագույն մասնագիտական կրթությամբ՝ 12: Դպրոցի շենքը տիպային է, գերազանց վերանորոգվել է 2013 թվականին՝ «Գեոթիմ» ՓԲԸ կողմից, պայմանները բարեկեցիկ են՝ արդի կրթական և մշակութային պահանջներին համապատասխան: Դպրոցի սաները պարբերաբար մասնակցում են փառատոնների՝ մշտապես ունենալով զգալի հաջողություններ, զբաղեցնելով մրցանակային տեղեր: Սաների մասնակցած միջոցառումներն են. 2019թ.-ին «Արտ-Մյուզիք» 10-րդ մրցույթ փառատոն, «Աշուղ Նազելի» մրցույթ-փառատոն, «Նազանք 2019» պարի հանրապետական մրցույթ-փառատոն, «Հայ-Վրացական» պարի փառատոն, «Պարարվեստի միջազգային օրվան նվիրված միջոցառում», «Նազանք» մրցույթ-փառատոն, «Աշուն 2019», «Արվեստի կամուրջ» հանրապետական համերգ-փառատոն Էջմիածին քաղաքում, «Արտ-Մյուզիք Մեղեդի» հանրապետական երգեցողության մրցույթ-փառատոն, «Արտ Մյուզիք Հմուտ Ձեռքեր» նկարչություն-դեկորատիվ կիրառական արվեստի հանրապետական 4-րդ մրցույթ-փառատոն, «Դո-մի-սոլ» սոլֆեջոյի և

գրականության մրցույթ Եղեգնաձոր քաղաքում, «Դասական երաժշտության» մրցույթ Եղեգնաձոր քաղաքում; 2021 թ.-ին՝ «Big Dance» պարի փառատոն, «Մարտի 8-ին» նվիրված պարի փառատոն, «Նազանք-2021» բազմավոճ պարերի մրցույթ, «Արտ Մյուզիք» արվեստի միջազգային մրցույթ-փառատոն, «Ժորա Այվազյանի» անվան պարային կենտրոնի և « Ծիծեռնակ» պարային թատրոն-ստուդիայի կազմակերպած համերգ՝ նվիրված պարարվեստի միջազգային օրվան, «Լինա» մշակութային կենտոնի կողմից կազմակերպած համերգ-փառատոն՝ պարարվեստի միջազգային օրվան նվիրված, «Մինորա» մշակութային կենտրոնում՝ համերգ նվիրված Վանուշ Խանամիրյանին, «Արվեստ» միջմարզային մրցույթ-փառատոն/Արարատ, Արմավիր,Վայոց ձոր/, «Զարթոնք» մրցույթ-փառատոն, «Ճանաչիր Հայաստանը» մարզային զբոսաշրջային ցուցահանդես Երևանի Խաչքարերի պուրակում, «Մշակութային խճանկար» պարային փառատոն Ծաղկաձոր քաղաքում, «Լինա» մշակութային կենտրոն համերգ-փառատոն, «Մենք մեր մասին» միջոցառում նվիրված ուսուցիչների օրվան, արվեստի դպրոցի ուսուցիչների մասնակցությամբ; 2022 թ.-ին «Արտ Մյուզիք» արվեստի միջազգային 13-րդ մրցույթ-փառատոն, «Վանուշ Խանամիրյանի անվան պարարվեստի գործիչների միություն» փառատոն՝ նվիրված պարի միջազգային օրվան:

«Ջերմուկի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի կազմում, Ջերմուկ քաղաքում, գործում է գրադարան, որի 2022 թ.-ի ընթերցողների թիվը մայիսի 1-ի դրությամբ կազմում է 508 անձ, գրքային ֆոնդը՝ 22223 կտոր գիրք, հաճախումները՝ 2963, տացքը՝ 3209, աշխատողների թիվը՝ 2: Գրադարանը միակն է համայնքում, գտնվում է Ջերմուկ քաղաքի Ձախափնյա մարդաշատ թաղամասում, շենքային պայմանները գերազանց են, վերանորոգման աշխատանքներն իրականացվել են 2012 թվականին: Գրադարանը քաղաքի մշակութային կյանքի կարևորագույն կենտրոնն է, կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ, գրքի քննարկումներ, շնորհանդեսներ, գրադարնի հետ արդյունավետ համագործակցում են համայնքի կրթական կազմակերպությունները:

Նույն ՀՈԱԿ-ի կազմում գործում է նաև Ջերմուկի երիտասարդական կենտրոնը աշխատողների թիվը՝ 2 կենտրոնի հետ համագործակցող կամավոր երիտասարդների թիվը անցնում է 30-ը: Տեղակայված է Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ մարդաշատ թաղամասի կենտրոնական հատվածում, բնակելի շենքի առաջին հարկում, այն տիպային է, քանի որ հատուկ այդ նպատակի համար վերանորոգվել է 2013 և 2021 թվականներին: Կենտրոնը բուռն գործունեություն է ծավալում ինչպես համայնքի ներսում, այնպես էլ՝ նրանից դուրս: Կազմակերպվում է համայնքային մասսայական միջոցառումներ, դասընթացներ, ակտիվորեն համագործակցում է թե հայրենական, թե միջազգային երիտասարդական հասարակական կազմակերպությունների հետ: Ջերմուկի երիտասարդական կենտրոնի առաքելությունն է համայնքի ու երիտասարդության զարգացման միջոցով ծառայել Ջերմուկ համայնքի անդամներին: Այն օգնում է երիտասարդներին բացահայտել և զարգացնել իրենց տաղանդը, կատարելագործել մասնագիտական հմտությունները և խթանել կամավորականության մշակույթի ձևավորումը կրթական միջոցառումների և այլ նախաձեռնությունների միջոցով: Ջերմուկի Երիտասարդական կենտրոնն աջակցում է համայնքի զարգացմանը՝ կազմակերպելով և իրականացնելով համայնքի ներգրավվածությամբ ծրագրեր, որոնք ծառայում են համայնքի սոցիալական, առողջապահական, կրթական, մշակութային, սպորտային և բնապահպանական կարիքներին, ինչպես նաև միտված են խորացնելու համագործակցային կապերը տեղական ինքնակառավարման մարմինների,

համայնքային և մարզային հասարակական և բիզնես սեկտորի, ազգային և միջազգային կազմակերպությունների հետ:

Ջերմուկ քաղաքում 1972 թվականից գործում է Հայաստանի Ազգային Պատկերասրահի Ջերմուկի մասնաճյուղը: Ցուցադրությունում ընդգրկված շուրջ 100 գեղանկարների և քանդակների միջոցով Ջերմուկի հասարակությանը և հյուրերին հնարավորություն է ընձեռվում պատկերացում կազմելու նորագույն շրջանի հայկական կերպարվեստի մասին՝ սկսած 1930-ական թթ. մինչև մեր օրերը: Պատկերասրահի այցելուները կարող են ծանոթանալ մեր ժամանակների խոշոր արվեստագետներ Մ. Սարյանի, Ա. Սարգսյանի, 1930-40-ական թթ. ստեղծագործական ասպարեզ իջած նկարիչներ Գ. Գրիգորյանի, Մ. Աբեղյանի, Հ. Զարդարյանի, Է. Իսաբեկյանի աշխատանքներին: Ավելի ուշ շրջանի արվեստը ներկայացված է Բ. Վարդանյանի, Հ. և Ա. Կալենցների, Գ. Խանջյանի, Մ. Ավետիսյանի, Լ. Բաժբեուկ-Մելիքյանի, Ս. Բաղդասարյանի, Խ. Իսկանդարյանի, Մ. Պետրոսյանի, Ռ. Ադալյանի և այլոց աշխատանքներով: Բացի մշտական ցուցադրությունից, մասնաճյուղում պարբերաբար կազմակերպվում են մշակութային բազմաբնույթ միջոցառումներ:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Հայաստանում և նրա սահմաններից դուրս Ջերմուկի մշակույթը ներկայացնելու գործին: Առկա է համագործակցություն «Հայաստանի Համայնքների Միության», «Հայաստանի ավագանիների ասոցիացիա» հասարակական կազմակերպության հետ: Փոխադարձ վստահության արդյունքում համայնքում իրականացվել են մի շարք ծրագրեր GIZ, Քաունթերփարթ ինտերնեյշնլ հայաստանյան կազմակերպության և այլ կառույցների հետ: Ջերմուկ քաղաքը քույր-քաղաքն է ֆրանսիական Սան-Ռաֆայել, չեխական Կառլովի Վարի, ղազախական Շուչինսկ և ռուսական Արխանգելսկ քաղաքների: Վերջինի հետ համագործակցության շրջանակներում մեծ ուշադրություն է դարձվում հատկապես մշակութային և երիտասարդական ոլորտային երկկողմանի ծրագրերին:

Մշակույթի կենտրոնների բացակայությունը իր բացասական ազդեցությունն է թողնում համայնքի գյուղական բնակավայրերում մշակութային կյանքի զարգացման վրա: Լավ վերանորոգված հանդիսության սրահ ունի միայն Գնդեվազ գյուղը՝ 160 աթոռով և գերազանց գույքով: Կեչուտը ևս ունի նման կառույց, սակայն շինությունն ունի հիմնանորոգման և նոր գույքով համալրման կարիք: Գյուղերում մշակութային, երիտասարդական միջոցառումներ իրականացնելու, բնակիչների ազատ ժամանցը հետաքրքիր և արդյունավետ անցկացնելու համար պայմաններ չկան:

Ջերմուկն իր բնաշխարհով և հանգստյան գոտիներով, յուրահատուկ բնական և մշակութային հուշարձաններով Հայաստանում դիտարկվում է որպես սիրված հանգստի և առողջարանային գոտի: Տարածքը հարուստ է պատմամշակութային և բնության հուշարձաններով: Տարածքում է գտնվում միջնադարյան Գնդեվանք վանական համալիրը (X-XVII դդ), Ս. Աստվածածին եկեղեցին և այլն: Ջերմուկ քաղաքում գործում է 2007 թվականին կառուցված Ս. Գայանե եկեղեցին, Կեչուտ գյուղում՝ նույնանուն մատուռը:

1.15 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքում գործում է «Ջերմուկի առողջության կենտրոն» ՓԲ ընկերությունը՝ կազմում ունենալով պոլիկլինիկա և ստացիոնար: Աշխատողների թիվը՝ 31: Սպասարկումն իրականացվում է ըստ ԱՆ գործող չափորոշիչների, ունի թերապիայի, մանկաբուժության, շտապ օգնության ծառայություններ: Թեպետ կենտրոնն ապահովված է խմելու ջրի

ջրամատակարարմամբ, առաջին բուժօգնության պարագաներով և դեղորայքով, բայց և այնպես՝ ունի ջեռուցման, բժշկական անձնակազմի, բժշկական և տեխնիկական գույքի խիստ կարիք: Գնդեվազում գործում է բուժակ մանկաբարձական կետ, որն ունի հիմնանորոգման կարիք: Կեչուտում որևէ բուժական հաստատություն չի գործում: Համայնքում առողջապահական ոլորտը ներկայացնում են նաև Ջերմուկ քաղաքում գործող առողջարանները, որոնք մատուցում են առողջարարական ծառայություններ: Համայնքի բժշկական բարձրագույն և միջին մասնագիտական կրթութուն ունեցող կադրերը հիմնականում աշխատում են առողջարաններում՝ ըստ անհրաժեշտության ծառայություն մատուցելով նաև բնակչությանը: Ամբուլատոր սպասարկման և պրոֆեսիոնալ բժշկական միջամտության անհրաժեշտության դեպքում համայնքի բնակիչները ստիպված են լինում դիմել համայնքից դուրս գտնվող բուժհաստատություններ (ամենամոտը՝ Վայք):

Համայնքի սպորտային կյանքը կանոնակարգող կառույցը «Ջերմուկի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ն է՝ աշխատողների թիվը՝ 18: Դրա մարզադպրոցում դասավանդվում են բոքս (սաների թիվը՝ 62) և ֆուտբոլ (սաների թիվը՝ 38) մարզաձևերը (ուսուցումն անվճար է), գործում է ֆիտնես ակումբ: Դպրոցի մի հատվածում, վարձակալական հիմունքներով, գործում է ММА մարտարվեստի խմբակ, որում մարզումները վճարովի են: Դպրոցը գործում է Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի բնակելի շենքերից մեկի առաջին հարկում, պայմանները գերազանց են՝ լիարժեք հիմնանորոգված և նոր գույքով համալրված: Կենտրոնի սաները մասնակցում են մարզային և հանարապետական մրցումների:

Աջափնյա թաղամասի Շահումյան 7/1 հասցեում գործում է կենտրոնի անվճար ուսուցմամբ շախմատի խմբակը՝ 18 աշակերտներով: Տնօրինության կողմից պարբերաբար կազմակերպվում են ներհամայնքային և միջհամայնքային մրցաշարեր, հաղթողները արժանանում են խրախուսական մրցանակների: Ջերմուկ քաղաքում պարբերաբար կազմակերպվում են հանրապետական և միջազգային նշանակության շախմատային մրցաշարեր, որոնց խմբակի սաները ակտիվորեն մասնակցում են:

Համայնքի հանրակրթական դպրոցներում գործում են մարզադահլիճներ և խաղահրապարակներ՝ ֆուտբոլի դաշտով (ֆուտբոլի դաշտ չունեն Ջերմուկի թիվ 1 հիմնական և Կեչուտ գյուղի միջնակարգ դպրոցները), որոնցից, բացի դպրոցի աշակերտներից, օգտվում են նաև համայնքի երիտասարդները:

1.16 ***ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ***

Համայնքի Ջերմուկ քաղաքի առողջարանային հատվածը ամբողջությամբ հանգստի գոտի է: Քաղաքն ունի 12 հա մակերեսով զբոսայգի, որը բարեկարգվել է ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրով:

կանաչապատ տարածք է՝ առանց ժամանակակից նստարանների,զրուցարանների, խաղային ատրակցիոնների ու կարուսելների, հետևաբար բնակիչների և քաղաքի հյուրերի ակտիվ հանգիստը առավել հարմարավետ և հաճելի դարձնելու համար այգին մեծածավալ բարեկարգման և արդիականացման միջոցառումների կարիք ունի: Փոքրիկ զբոսայգի կա նաև Ջերմուկ համայնքի «Զատիկ» մանկապարտեզի բակային տարածքում,

որի մի հատվածը վերածված է խաղահրապարակի, որը հիմնականում ծառայում է մանկապարտեզ հաճախող, ինչպես նաև այդ թաղամասում բնակվող երեխաներին: Խաղահրապարակներ կան նաև քաղաքի մի քանի բնակելի շենքերի բակերում. այս խաղահրապարակները կարիք ունեն մասնակի վերանորոգման. անհրաժեշտ է այստեղ կառուցել ավազային խաղահրապարակներ և թարմացնել խաղամիջոցները: Մնացած շենքերի բակերում և համայնքի գյուղական բնակավայրերում խաղահրապարակներ չկան,բակային տարածքներն էլ ենթակա են հիմնանորոգման:

1.17 ***ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ***

Համայնքում կան 5992 աշխատունակ մարդիկ, որոնցից մշտական աշխատանքով (այդ թվում՝ գյուղատնտեսական) զբաղված են 3675-ը, մնացած 368-ն աշխատանք չունեն, սակայն վերջիններից միայն 181-ն են գրանցված Զբաղվածության պետական գործակալության Ջերմուկի զբաղվածության տարածքային կենտրոնում որպես գործազուրկներ, քանի որ համայնքի գյուղական բնակավայրերի բնակիչները հիմնականում հողերի սեփականատերեր են և, ՀՀ օրենսդրության համաձայն, չեն կարող համարվել գործազուրկ:

Համայնքի մոտ 2424 ընտանիքներից 363-ը հաշվառված են ընտանեկան նպաստի պետական համակարգում, որոնցից սոցիալապես անապահովության նպաստառուներ են գնահատվել 255 ընտանիքները (ընդհանուրի մոտ 10.5%-ը): Համայնքում բնակվում են նաև մոտ 266 հաշմանդամ և միակողմանի ծնողազուրկ 75 երեխա: :
Համայնքի ընտանիքների մեծ մասը սոցիալապես խոցելի են՝ բազմաբնույթ սոցիալ-առողջապահական խնդիրներով: Համայնքի բնակիչներին շոշափելի սոցիալական ծառայություններ մատուցվում են հիմնականում Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության տարածքային բաժնի, համայնքապետարանի, մասնավոր հատվածի բարերարների կողմից:

1.18 ***ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ***

Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» N 15-Ն, «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին» N 16-Ն , «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին 17-Ն որոշումներով ամրագրվել է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11 հոդվածի կիրարկումը համայնքում: ՏԻՄ-երի գործունեության մասին համայնքի բնակիչներին իրազեկելու լավագույն տարբերակը Ջերմուկի համայնքապետարանի պաշտոնական jermuk.am կայքն է, ֆեյսբուքյան էջը, որտեղ առկա ինֆորմացիան պարբերաբար թարմացվում է և հասանելի է յուրաքանչյուրին: Կայքը գործարկվում է լիարժեքորեն, տեղադրվում են ամենավերջին համայնքային նորությունները, զետեղվում են հայտարարությունները, ընտանեկան նպաստ ստացողների ցուցակները, հնարավորություն է ընձեռնված յուրաքանչյուրին առցանց հետևելու իր պայմանագրի

(առկայության դեպքում) հաշվարկներին, վճարներին, գոյացած պարտքերին և վճարման ժամանակացույցին: Կայքն ունի «Ֆորում» ենթաբաժինը, որտեղ կայքի այցելուն կարող է իր գրառումները (կարծիք, քննարկում) թողնել ըստ ոլորտների, ըստ թեմաների: Ընդ որում, կայքի աշխատանքային ներքին ցանցին միացած են նաև գյուղական բնակավայրերը՝ անհրաժեշտ համակարգչային տեխնիկայով: Կայքում առկա է ՏԻՄ-ի գործունեության (ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների) վերաբերյալ հանրային մեկնաբանություններ թողնելու, կարծիքներ արտահայտելու հնարավորություն:

Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությունը դրսևորվում է հանրային լսումներին (քննարկումներին) նրանց մասնակցությամբ: Տարեկան կտրվածքով կազմակերպվում են 15-20 հանրային լսումներ. դրանք հիմնականում ՏԻՄ-ի կողմից ընդունվելիք նորմատիվ որոշումների նախագծերի , անցկացվելիք երկրաբանական ուսումնասիրությունների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտերի, հաշվետվությունների քննարկումներ են, որոնց ժամանակ լսումներին մասնակից բնակիչները հնարավորություն են ունենում արտահայտելու իրենց տեսակետներն ու կարծիքները:

1.19 ***ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ***

Համայնքում աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման ոլորտը համայնքում լիարժեք ձևավորված է: Իրականացվել է տեղական մակարդակում խոցելիության և կարողությունների գնահատման գործողություններ, որոնց հիման վրա պլանավորել են համայնքին սպառնացող աղետների ռիսկի նվազեցման գործողություններ ու միջոցառումներ համայնքի բոլոր բնակավայրերում: Տեղական մակարդակում աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) շրջանակներում խոցելիության և կարողությունների գնահատման (ԽԿԳ) մեթոդներն ու գործիքները, ինչպես նաև դրա իրականացման գործընթացը նկարագրված են հավելված 8-ում:

Ջերմուկ համայնքի ղեկավարի 12.03.2020թ.-ի թիվ 118-Ա որոշմամբ ստեղծվել է Ջերմուկ համայնքում աղետների ռիսկի կառավարման խորհուրդ, իսկ 13.04.2022թ.-ի թիվ 92-Ա որոշմամբ՝ հաստատվել է Ջերմուկ համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանը:

Ջերմուկ համայնքը աղետների դեպքում Վայոց ձորի մարզի Արտավան, Բարձրունի, Գոմք և Կապույտ համայնքների բնակիչներին ընդունող և ապաստանով ապահովող հաամայնք է ճանաչվել: Սահմանված են այն առողջարանները, որտեղ ըստ անհրաժեշտության պետք է ապաստանեն տարհանված բնակիչները: Համայնքը աղետների ռիսկի նվազեցման ոլորտում համագործակցում է գործող մարզային և հանրապետական նշանակության համապատասխան մարմինների հետ: Ջերմուկ քաղաքում գործում է «Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայություն» ՊՈԱԿ-ի մասնաճյուղը, ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության դիտացանցի արդիականացում» ծրագիրը հաստատելու մասին» N 835-Ն որոշմամբ ռադոնաչափական և էլեկտրամագնիսաչափական կայաններ են տեղադրվել Ջերմուկ քաղաքում:

1.20 ***ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ***

Համայնքապետարանը առանձնակի ուշադրություն է դարձնում առողջարանների և հանգստյան տների շուրջտարյա գործունեության ապահովմանը: Ներկայումս գործում են 15 (2-ը հիմնանորոգվում են) առողջարաններ, հանգստյան տներ, հյուրատներ, որոնք աստիճանաբար առավել բարետես ու հարմարավատ են դառնում և կատարում են որակյալ սպասարկում: Տարեցտարի ավելանում է ընտանեկան տուրիզմով զբաղվող ձեռներեցների թիվը: Գնալով համայնքում ավելանում է հանգստացողների և բուժվողների թիվը, զարգանում է զբոսաշրջությունը: Նկատելիորեն աճել են մանր և միջին ձեռնարկությունների, ծառայություններ մատուցող անհատ ձեռներեցների թիվը: Ջերմուկը զբոսաշրջային կենտրոն վերածելու կառավարության ծրագրի իրականացման լավագույն վկայություններից են հիմնանորոգված և նորակառույց ենթակառուցվածքները՝ արդյունքում նորոգվող, ընդլայնվող և թարմացվող հյուրատները, հյուրանոցները, որոնք մրցակցային մթնոլորտում ավելի ու ավելի բարձրակարգ սպասարկում են ապահովում ոչ միայն տեղացի, այլև արտասահմանցի զբոսաշրջիկների համար: Ջերմուկ քաղաքի համար, որպես զբոսաշրջության կենտրոնի, մեծագույն ձեռքբերում էր Ջրաբուժության և կլիմայաբուժության համաշխարհային ֆեդերացիային (ФИМТЕК ` Всемирной Федерации Водолечения и Климатолечения) անդամակցելը (2015 թվական), որի 69-րդ համաժողովը 2016 թվականին անցկացվեց Ջերմուկում: 2019 թվականին ռուսական Արխանգելսկ քաղաքի հետ համագործակցության շրջանակներում կազմակերպվել է բիզնես-ֆորում՝ առևտրային, գործընկերային հարաբերություններ հաստատելու, մշակութային և կրթական համագործակցությունը խորացնելու նպատակով: Համայնքապետարանի հետ մշտական և արդյունավետ համագործակցային կապեր են հաստատել բոլոր առողջարաններն ու հյուրատները, յուրաքանչյուրը իր ներդրումն ունի համայնքի բարեկեցության հարցում: Տուրիզմի ոլորտը համակարգելու և զարգացնելու նպատակով Ջերմուկ քաղաքում նախատեսվում է ստեղծել տուրիստականտեղեկատվականկենտրոն: Համայնքի գյուղական բնակավայրերում նշանակալի աշխատանքներ պետք է կատարվեն՝ այստեղ գյուղական տուրիզմի զարգացման սկիզբը դնելու համար, քանի որ բոլոր գյուղերում էլ առկա է հսկայական պոտենցիալ՝ պատմամշակութային կոթողներ, բնության տեսարժան վայրեր, խաչքարեր, մատուռներ և այլն:

Համայնքի գործարար միջավայրը ներկայանում է նաև գործող առևտրի կետերով, գործարաններով, ռեստորաններով և հիդրոէլեկտրակայաններով: Գործարանները 2-ն են՝ «Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ-ն (հանքային ջրի) և «Վ. Մարգարյան և որդիներ»(հացի), փոքր արտադրական ձեռնարկությունները՝ 7-ը (4-ը՝ հացաթխման, 3-ը՝ կաթ-կաթնամթերքի վերամշակման): Համայնքում գործում են հանրային սննդի 8 կետեր՝ (ռեստորան, սրճարան, արագ սննդի կետ), մի քանի հիդրոէլեկտրակայաններ: Վերջիններ համայնքապետարանի հետ կնքված պայմանագրերին համապատասխան պարտավոր են որոշակի ներդրումներ կատարել քաղաքում: Որոշակի զարգացած գործարար միջավայր ունի նաև Գնդեվազ գյուղը: Գնդեվազում ևս կա գյուղատնտեսական մեքենամեխանիզմներ ունեցող կոոպերատիվ, չրանոց, կաթի գործարան, կարի արտադրամաս: Չրանոցն ու կարի արտադրամասը կյանքի են կոչվել «Գեոթիմ» ՓԲԸ-ի սոցիալական ծրագրերի շրջանակներում:

Հիմնվելով համայնքում տիրող փաստացի իրավիճակի ուսումնասիրության, վերլուծության և գնահատման արդյունքների վրա՝ կարելի է արձանագրել համայնքում ներկայում առկա ընդհանուր և ոլորտային հիմնական հիմնախնդիրները: Դրանք են՝

- համայնքի գյուղական բնակավայրերը ունեն հանդիսությունների սրահների նորոգման /Գնդեվազինը՝ մասնակի/ կարիք,
- Ջերմուկ քաղաքում զբոսայգիների բարեկարգման և կահավորման կարիք ունի

- ներհամայնքային ճանապարհների բարկարգման և ճանապարհային երթևեկության նշաններով կահավորման կարիք,
- գյուղերում արտաքին լուսավորության համակարգի ընդլայնում,
- գյուղերում խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և ոռոգման համակարգի համակարգի հիմնանորոգման և ընդլայնում,
- գյուղերի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ՝ արտադրված գյուղատնտեսական մթերքներն իրացնելու, մինչև շուկա հասցնելու հարցում,
- Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոցի շենքն ունի ընթացիկ նորոգման և ներքին հարդարման կարիք,
- Կեչուտ և Գնդեվազ գյուղերի վարչական ներկայացուցիչների նստավայրերի շենքերն ունեն հորոգման և նոր գույքով կահավորման կարիք,
- ցանկապատել Ջերմուկի քաղաքային և Կեչուտ գյուղի գերեզմանատները,
- Ջերմուկ քաղաքի գերեզմանատուն տանող ճանապարհը հիմնանորոգման կարիք ունի,
- համայնքից տարեցտարի արտագաղթն իր բացասական ազդեցությունն է թողնում համայնքի դպրոցի աշակերտների, մանկապարտեզի սաների թվերի վրա, որոնք վերջին տարիներին անընդհատ նվազում են՝ իր բոլոր բացասական հետևանքներով հանդերձ,
- համայնքի աշխատունակ բնակչության մոտ ¼-ը չունի մշտական աշխատանք, այդ պատճառով հաճախ բնակիչների մի որոշակի մասը, հատկապես՝ գյուղերից, մեկնում է արտագնա աշխատանքի այլ երկրներ, մեկնողներից ոչ բոլորն են վերադառնում համայնք

Համայնքի հիմնախնդիրների ցանկը կարելի է շարունակել, սակայն, ակնհայտ է, որ հնգամյա ժամանակահատվածում անհնար է լուծում տալ համայնքում առկա բոլոր հիմնախնդիրներին: Վերևում թվարկված հիմնախնդիրներից անհրաժեշտ է առանձնացնել նրանք, որոնց լուծումն, իրատեսականության տեսանկյունից, նպատակահարմար է ներառել համայնքի 2022-2026 թթ. ՀԶԾ-ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից և համայնքի հետագա զարգացման՝ ՏԻՄ-երի ընտրած ռազմավարությունից և սահմանած հիմնական նպատակներից:

- Բարեկարգման և ասֆալտապատման կարիք ունի Ջերմուկի ճոպանուղու հարակից տարածքը, կապիտալ նորոգման կարիք՝ գլխավոր ճոպանը, Ջերմուկի Ի. Օրու հրապարակից դեպի ճապանուղի գնացող ճանապարհին կից պետք կառուցվեն մայթեզրեր,
- Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցից դեպի եկեղեցի գնացող ճանապարհին կից պետք է կառուցվեն մայթեր, տեղադրվեն եզրաքարեր
- Ջրվեժից դեպի «Ջերմուկ» հյուրանոց տանող ճեմուղու կիսատ հատվածը և ըմպելասրահից Քարայծի արձան տանող ճեմուղին նորոգման կարիք ունեն
- Ասֆալտապատման, բարեկարգման և մայթեր կառուցելու կարիք ունի քաղաքի գլխավոր՝ Շահումյան փողոցի վերջնամասը,
- Ասֆալտապատման և մայթերի բարեկարգման կարիք ունեն քաղաքի Բ. Վարդանյան, Մյասնիկյան, Մ. Ադամյան, Իսակովի, Մաշտոցի փողոցները, Կեչուտի 1-ին փողոցը,
- Պետք է ասֆալտապատվի դեպի Եղնիկի արձան տանող ճանապարհը, բարեկարգվի դրան հարակից շրջակայքը, կառուցվի արտաքին լուսավորության համակարգ և դիտահրապարակ, տարածքը վերածվի հանգստի գոտու
- Պետք է բարեկարգվի դեպի Սայաթ նովայի աղբյուրներ տանող ճանապարհը, տեղանքը վերածվի հանգստի գոտու
- Ջերմուկ քաղաքում պետք է ստեղծվի ատրակցիոն պարկ,
- Անհրաժեշտ է քաղաքում ունենալ տուրիստական տեղեկատվական կենտրոն
- Անհրաժեշտ է բարեկարգել Վ. Սարգսյանի անվան զբոսայգին և Ազատամարտկիների փողոցի սկզբնամասի պուրակը
- Անհրաժեշտ է բոլոր հնարավոր միջոցառումներով խթանել միջհամայնքային և ներհամայնքային տուրիզմի զարգացումը, այդ նպատակով բարեկարգել գյուղամիջյան ճանապարհները
- Համայնքի բազմաբնակարան ֆոնդն ունի մուտքերի նորոգման, Կեչուտում նաև տանիքների նորոգման կարիք, և այլն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹՀՎ – ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքի աշխարհագրական դիրքի՝ մաքուր օդով, կանաչապատ գոտիներով, անտառներով, շնորհիվ բարենպաստ հնարավորությունների առկայությունը տուրիզմի, էկոտուրիզմի, էքստրեմալ տուրիզմի և ագրոտուրիզմի զարգացման համար:

- Մարզկենտրոնի և մայրաքաղաքի հետ մշտական կապը՝ ավտոբուսով և երթուղային տաքսիներով
- Համայնք գրեթե 100%-ով գազաֆիկացված լինելը :
- Համայնքում գործող ֆիքսված հեռախոսակապը, «Վիվասել-ՄՏՍ», «Ռոստելեկոմ», «Յուքոմ» և «Բիլայն» շարժական կապի և ինտերնետ ծառայությունները: Հեռարձակվում են 7 հեռուստաալիքներ: Համայնքն ապահովված է խմելու ջրի 24 ժամյա գրաֆիկով, ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվում է «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի և համայնքի կողմից:
- Տեսարժան վայրերի առկայությանը մեծ հեռանկարներ է բացում տուրիզմի բոլոր տեսակների հետագա զարգացման համար
- Առկա են առևտուր և սպասարկում իրականացնող օբյեկտներ թե քաղաքում, թե գյուղական բնակավայրերում
- Համայնքում անխափան գործում է ճոպանուղին:
- Համայնքը տարածաշրջանում առողջապահական -առողջարարական կենտրոն է համարվում
- Մասնավոր ներդրողների ակնհայտ հետաքրքրվածությունը համայնքի նկատմամբ, կատարված և կատարվելիք ներդրումները
- Գնդեվանք վանական համալիրի, հնագույն եկեղեցիների, բազմաթիվ խաչքարերի և բնության հուշարձանների առկայությունը համայնքի բոլոր բնակավայրերում
- Համայնքի մշտական և ակտիվ մասնակցությունը ներպետական և միջազգային նշանակության միջոցառումներին, անդամակցումը միջազգային կառույցներին, արտաքին կապերը՝ հարաբերությունները քույր-քաղաքների հետ
- Կոմունալ սպասարկման և գյուղատնտեսական տեխնիկայի առայությունը :

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝

- Աշխարհագրական դիրքն ու բնակլիմայական պայմանները
- Երիտասարդների և մտավորականության արտահոսքը
- Երիտասարդության աշխատանքային և ժամանցային վայրերի բացակայություն
- Մասնագիտական կրթություն ստանալու կամ վերապատրաստում ու վերաորակավորում անցնելու սահմանափակ հնարավորությունները
- Բժշկական ծառայությունների սահմանափակ հնարավորությունները
- Հեռավորությունը մայրաքաղաքից
- Ամառային առողջարարական սեզոնի կարճ և ձմռան սեզոնի երկար տևողությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

- Զբոսաշրջության զարգացումը
- Գյուղմթերքների վերամշակման փոքր արտադրությունների ընդլայնման հնարավորությունը
- Տեղացի և սփյուռքահայ ներդրողների համար փոքր և միջին բիզնեսը ընդլայնելու նպատակով հնարավորությունների ստեղծումը
- Համայնքի վարչական տարածքում բազալտի, ավազի հանքերի առկայությունը
- Անասնապահության, այգեգործության և դաշտավարության զարգացումը
- Տարածաշրջանի այլ համայնքների հետ միջհամայնքային համագործակցություն ծավալելու դեպքում հնարավոր կլինի լուծել ընդհանուր աղբավայր ունենալու և շահագործելու հարցը, բոլոր այդ համայնքներում պատշաճ մակարդակով կազմակերպել աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը
- Մշակույթի տան կառուցումն ու շահագործումը մեծապես կնպաստի համայնքի մշակութային կյանքի ակտիվացմանը, երիտասարդների հետ նպատակային աշխատանքների կազմակերպմանը և իրականացմանը, երեխաներին արտադպրոցական դաստիարակության խմբակներում ներգրավմանը:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

1. Ամուլսարում կատարվող հանքարդյունաբերության հնարավոր պատճառած վնասները
2. Գործազրկության մակարդակի աճը
3. Բնակֆոնդի վիճակի վատթարացումը
4. Արտագաղթը, հատկապես երիտասարդների շրջանում
5.

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Ջերմուկ համայնքի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հաշվարկված հնարավորություններից: Ըստ այդ հաշվարկների, համայնքի տարածքում կարող է բնակվել առավելագույնը 15 հազ. մարդ՝ չխախտելով տարածքի էկոլոգիական հավասարակշռությունը, ընդ որում աճի տեմպերի համար ժամկետներ չեն կանխատեսվում, քանի որ այն կախված է

հանրապետության ընդհանուր տնտեսական զարգացման տեմպից, քաղաքական իրավիճակից, բնակչությանը աշխատատեղերով ապահովելու մակարդակից:

Ջերմուկ համայնքում աշխատատեղերի մեծ քանակ կարելի է ակնկալել բնական ռեսուրսների, հիմնականում հումքային, սպասարկման ոլորտի, գյուղատնտեսության հնարավորությունները ռացիոնալ օգտագործելով: Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետության և դոնոր կազմակերպությունների հետ:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

Համայնքը դարձնել առողջարանային և գյուղական տուրիզմի զարգացած կենտրոն, բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող բնակավայր: Մասնավորապես,

- Ջերմուկը դարձնել ամբողջ տարին գործող, միջազգային չափանիշներին համապատասխանող առողջ և ակտիվ կենսակերպի զբոսաշրջային կենտրոն՝ շեշտը դնելով առողջարանային և ձմեռային, նաև՝ մշակութային զբոսաշրջության կենտրոն, շախմատի միջազգային մրցաշարերի կոնտրոն, համահայկական և միջազգային մանկապատանեկան և երիտասարդական ճամբարատեղի վերածելու գաղափարի վրա:

- Գյուղական բնակավայրերը վերածել գյուղական տուրիզմի կենտրոնների, զարգացնել այգեգործությունը, իրագործել գյուղատնտեսական մթերքների՝ տեղում արտադրելու, վերամշակելու և սպառման շուկա ստեղծելու գաղափարը, աշխուժացնել երիտասարդական և մշակութային կյանքը:

- Քաղաք-գյուղ, գյուղ-գյուղ կապերը դարձնել սերտ և փոխկապակցված՝ համախմբված ընդհանուր նպատակի՝ համայնքի զարգացման և առաջընթացի գաղափարի շուրջ:

- Նպաստել գործարար միջավայրի բարելավմանը, խթանել ձեռնարկատիրությունը:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ***ռազմավարությունն*** է՝

- ✓ խթանել համայնքում զբոսաշրջության բոլոր տեսակների զարգացումը, ոլորտին առնչվող ծառայությունների աստիճանական ընդլայնումը՝ զբոսաշրջիկների քանակի տարեցտարի ավելացման միջոցով, համայնքում էկոտուրիզմի և ագրոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում՝ զբոսաշրջիկների գիշերակացի տնային պայմանների ապահովման, հասարակական սննդի, առևտրի և կենցաղսպասարկման օբյեկտների ստեղծման, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման միջոցով,

- ✓ Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություններ

- ✓ Ապահովել համայնքի կազմի մեջ մտնող բոլոր բնակավայրերի համամասնական զարգացումը

- ✓ Ըստ ամենայնի խթանել ձեռներեցությունը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ

- ✓ Պահպանել համայնքի ճարտարապետության արդի ոճը, բացառել ինքնակամ շինարարությունը և ապօրինի հողազավթումները

- ✓ Խթանել համայնքային տարբեր շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, անհատների նախաձեռնությունները և նրանց ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը

- ✓ Սերտորեն համագործակցել համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների հետ

- ✓ Նպաստել համայնքում աշխատատեղերի ընդլայնմանը՝ ռացիոնալ օգտագործելով բնական ռեսուրսները, զարգացնելով առևտրի և սպասարկման ոլորտն ու գյուղատնտեսությունը

- ✓ Բարձրացնել բնակչության կենսամակարդակը՝ ընդլայնելով մատուցվող հանրային ծառայությունների որակն ու շրջանակը

- ✓ համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,

- ✓ ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում, արտաքին լուսավորության համակարգի անցկացում, ճանապարհային նշանների տեղադրում,

- ✓ համայնքի բնակչության սոցիալ–տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական հանրակրթություն, մշակույթ, առողջապահություն և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման միջոցով ,

- ✓ տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բարելավում՝ համայնքային կենտրոնի ստեղծման և մասնակցության ձևերի զարգացման միջոցով,

- ✓ ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության աստիճանի հետևողական բարձրացում:

Համայնքի զարգացման ծրագրի հիմնական նպատակներն են՝

- Ունենալ բարեկարգ և զբոսաշրջության միջազգային չափանիշները բավարարող համայնք
- Ունենալ բարեկարգ բազմաբնակարանային ֆոնդ
- Բարելավել համայնքապետարանի և վարչական ներկայացուցիչների նստավայրերի շենքային և գույքային պայմանները
- Շարունակական բարձրացնել նախադպրոցական և արտադպրոցական կրթության ոլորտում մատուցվող ծառայությունների որակը
- Ունենալ մաքուր շրջակա միջավայրով համայնք՝ չխախտելով բնության և շրջակա միջավայրի սանիտարահիգենիկ վիճակը, խուսափել հիվանդություններից և համաճարակներից
- Համայնքը դարձնել ավելի հետաքրքիր, հրապուրիչ և հարմարավետ զբոսաշրջիկների համար
- Ունենալ այգիներ տանող հարթ և բարեկարգ ճանապարհներ՝ նպաստելով այգեգործության և էկոտուրիզմի զարգացմանը
- Ակտիվացնել համայնքի մշակութային կյանքը
- Համայնքի բնակիչներին և զբոսաշրջիկներին ապահովել նրանց հանգստի կազմակերպման, շփումների ապահովման հաճելի պայմաններով
- Ունենալ բարեկարգ և մարմնամարզական գույքով հագեցած գործող սպորտային ենթակառուցվածքներ
- Ունենալ բարեկարգ զբոսայգի
- Ստեղծել համայնքում հանդիսություններ կազմակերպելու բավարար պայմաններ
- Ընդլայնել ոռոգման ցանցը և արդյունավետ օգտագործել ոռոգման ջրի պաշարները
- Նպաստել գյուղատնտեսական աշխատանքների հեշտացմանը՝ ունենալով հարթեցված դաշտամիջյան ճանապարհներ, տեխնիկա
- Նպաստել գյուղատնտեսության զարգացմանը

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Գոյություն ունեն Ջերմուկ համայնքի զարգացմանն ու միջհամայնքային համագործակցությունն ապահովող միտված ծրագրեր: Դրանցից են շվեյցարական ԹայգերԴեվ Սվիս ընկերության կողմից մշակված քաղաքաշինության զարգացման

ծրագիրը, Ասիական Զարգացման Բանկի ֆինանսական աջակցությամբ «Կայուն քաղաքաշինական ներդրումային ծրագիրը», ինչպես նաև ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի « Ջերմուկ քաղաքը զբոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին» N 1064-Ն որոշումը: Ջերմուկի համայնքապետարանը, Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Տեղական տնտեսությունների և ենթակառուցվածքների զարգացման (տուրիզմի)» ծրագրի շրջանակներում, համագործակցում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության տուրիզմի կոմիտեի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ արդյունավետ համագործակցում է մի շարք ենթակառուցվածքների կառուցման, հիմնանորոգման ենթածրագրերի շուրջ:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջև համաձայնեցված՝ «Հայաստանի 18 խոշորացված համայնքներում Տեղական տնտեսական զարգացման տեսլականների մշակում» ծրագրի շրջանակներում կազմվել է 18 խոշորացված համայնքերում, այդ թվում՝ Ջերմուկի, տնտեսական զարգացման պլանը:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքի 2020-2021**թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և** 2022-2026**թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը**

հազար դրամ

Մուտքերի անվանումը	2020**թ. փաստ.**	2021**թ. փաստ.**	2022**թ. պլան.**	2023**թ. կանխ.**	2024**թ. կանխ.**	2025**թ. կանխ.**	2026**թ. կանխ.**
ԸՆԴԱՄԵՆԸ	713,338.74	827,677.64	665,002.00	698252.10	733164.71	769822.94	808314.09
ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ	37,186.15	54,954.01	40,112.22	42117.83	44223.72	46434.91	48756.65
ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՇԵՆՔԵՐ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ	17,633.91	6,597.39	14,416.16	15136.97	15893.82	16688.51	17522.93
ՀՈՂԻ ՀԱՐԿ ԳՅՈՒՂ.ՆՇԱՆԱԿ. ՀՈՂԵՐԻՑ-ՋԵՐՄՈՒԿ	5,428.77	2,342.24	7,051.35	7403.92	7774.11	8162.82	8570.96
ՀՈՂԻ ՀԱՐԿ ՈՉ ԳՅՈՒՂ.ՆՇԱՆ. ՀՈՂԵՐԻՑ-ՋԵՐՄՈՒԿ	14,123.47	7,817.89	6,030.60	6332.13	6648.74	6981.17	7330.23
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ	0	24,484.57	3,262.10	3425.21	3596.47	3776.29	3965.10

(Ջերմուկ բնակավայր)							
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ (Գնդեվազ բնակավայր)	0	0	5,580.24	5859.25	6152.21	6459.83	6782.82
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ (Ջերմուկ բնակավայր)	0	13,711.91	3,354.67	3522.40	3698.52	3883.45	4077.62
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ (Գնդեվազ բնակավայր)	0	0	417.10	437.96	459.85	482.85	506.99
ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ	37,773.78	47,054.30	54,843.50	57585.68	60464.96	63488.21	66662.62
ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՓՈԽԱԴՐԱՄԻՋ. ՀԱՄԱՐ (Ջերմուկ բնակավայր)	0	0	40,816.90	42857.75	45000.63	47250.66	49613.20
ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՓՈԽԱԴՐԱՄԻՋ. ՀԱՄԱՐ (Կեչուտ բնակավայր)	0	0	7,587.00	7966.35	8364.67	8782.90	9222.05
ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՓՈԽԱԴՐԱՄԻՋ. ՀԱՄԱՐ (Գնդեվազ բնակավայր)	0	0	4,728.30	4964.72	5212.95	5473.60	5747.28
ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՓՈԽԱԴՐԱՄԻՋ. ՀԱՄԱՐ (Ջերմուկ բնակավայր իրավաբանական անձանցից)	0	0	1,666.90	1750.25	1837.76	1929.65	2026.13
ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՓՈԽԱԴՐԱՄԻՋ. ՀԱՄԱՐ (Գնդեվազ բնակավայր իրավաբանական անձանցից)	0	0	16.10	16.91	17.75	18.64	19.57
ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՓՈԽԱԴՐԱՄԻՋ. ՀԱՄԱՐ (Կեչուտ բնակավայր իրավաբանական անձանցից)	0	0	28.30	29.72	31.20	32.76	34.40
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	4,273.42	6,935.77	6,020.12	6321.13	6637.18	6969.04	7317.49
ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆ. ՇԻՆԱՐ. ԹՈՒՅԼԱՏՎ. ՀԱՄԱՐ	133.75	2,438.75	420.00	441.00	463.05	486.20	510.51
ՄԻՆՉԵՎ 300 ՔՄ ՕԲՅ.ՀԱՄԱՐ-ՋԵՐՄՈՒԿ	0	78.00	400.00	420.00	441.00	463.05	486.20
ՇԻՆ-ՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽ-ԵՐԻ ԹՈՒՅԼՏՎ. ՀԱՄԱՐ	204.95	22.25	15.00	15.75	16.54	17.36	18.23

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎ. ՀԱՄԱՐ	0.00	0.00	25.00	26.25	27.56	28.94	30.39
ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏ. ՀԱՄԱՐ	915.36	943.55	1,456.50	1529.33	1605.79	1686.08	1770.38
ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ	811.81	623.65	780.90	819.95	860.94	903.99	949.19
ԲԱՑՕԹՅԱ ՎԱՃԱՌՔ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏ. ՀԱՄԱՐ	263.25	361.71	507.15	532.51	559.13	587.09	616.44
ՀԵՂ. ՎԱՌԵԼ., ՀԵՂՈՒԿԱՑՎ. ԳԱԶԵՐԻ ՎԱՃ. ԹՈՒՅԼՏ. ՀԱՄԱՐ	85.00	155.00	150.00	157.50	165.38	173.64	182.33
ՏԵԽՆ. ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏ. ՀԱՄԱՐ	0.00	0.00	15.00	15.75	16.54	17.36	18.23
ԺԱՄԸ 24.00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎ. ՀԱՄԱՐ	361.25	606.50	0.00	0.00	0.00	0.00	0.00
ՀԱՄ. ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔ. ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐ. ԹՈՒՅԼՏ. ՀԱՄԱՐ	469.05	378.86	621.32	652.39	685.01	719.26	755.22
ԹԱՆԿԱՐԺ. ՄԵՏԱՂ-ՐԻ ՄԱՆՐԱԾ. ԱՌՈՒՎԱՃ. ԹՈՒՅԼՏՎ. ՀԱՄԱՐ	105.00	37.50	75.00	78.75	82.69	86.82	91.16
ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎ. ՀԱՄԱՐ	0.00		0	0.00	0.00	0.00	0.00
ՈՉ ՀԻՄՆ. ՇԻՆՈՒԹ. ՆԵՐՍՈՒՄ ՀԱՆՐ. ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊ. ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑ. ԹՈՒՅԼՏ. ՀԱՄԱՐ (50-ԻՑ ՄԻՆՉԵՎ 100 ՔՄ)	49.00	15.00	579.25	608.21	638.62	670.55	704.08
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՎԱՆ. ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆ. ՕԳՏԱԳՈՐԾ. ԹՈՒՅԼՏՎ. ՀԱՄԱՐ	875.00	1,275.00	975.00	1023.75	1074.94	1128.68	1185.12
ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	746.00	562.00	150.00	157.50	165.38	173.64	182.33
ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՔԿԱԳ-ԻՑ	345.00	562.00	150.00	157.50	165.38	173.64	182.33

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻՑ	401.00	0.00	0	0.00	0.00	0.00	0.00
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	264,880.26	286,586.69	200,914.79	210960.53	221508.56	232583.98	244213.18
ՊԵՏ.Բ-ԻՑ ՖԻՆ. ՀԱՄԱՀԱՐԹ. ՍԿՋԲ-ՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎ. ԴՈՏԱՑ-ՆԵՐ	132,617.10	181,596.70	183,422.40	192593.52	202223.20	212334.36	222951.07
ԲԱ) ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ՆՎԱՋԵՑՆՈՂ՝ ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐՆԵՐ	444.76	8.30	0	0.00	0.00	0.00	0.00
ՊԵՏ. ԲՅ-ԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՆՊԱՏԱԿ. ՀԱՏԿԱՑ. (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ)ԱԴ-1 ՀՈԱԿ	2,333.70	1,011.30	1,089.36	1143.83	1201.02	1261.07	1324.12
ՊԵՏ. ԲՅ-ԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՆՊԱՏԱԿ. ՀԱՏԿԱՑ. (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ)ԱԴ-2ՀՈԱԿ	2,100.40	911.00	1,307.23	1372.59	1441.22	1513.28	1588.95
Ա) ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ)	127,384.30	103,059.39	15,095.80	15850.59	16643.12	17475.28	18349.04
ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	227,616.42	195,125.76	218,816.26	229757.07	241244.93	253307.17	265972.53
ՀԱՄ. ՍԵՓ. ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ-ՋԵՐՄՈՒԿ	116,034.95	101,428.14	137,186.28	144045.59	151247.87	158810.27	166750.78
ՀԱՄ. ՍԵՓ.Պ/Ֆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ	106,139.18	89,810.07	76,274.92	80088.67	84093.10	88297.75	92712.64
ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ ՄՈՒՏՔԵՐ-ՋԵՐՄՈՒԿ	5,442.30	3,887.55	5,355.06	5622.81	5903.95	6199.15	6509.11
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿ-ԻՑ ԵՎ ԾԱՌԱՅ-ՐԻ ՄԱՏՈՒՑ-ԻՑ ԵԿԱՄ-ՆԵՐ	17,433.37	9,323.70	2,620.96	2752.01	2889.61	3034.09	3185.79
ՔԿԱԳ ՀԱՄԱՐ	3,703.27	3,419.20	2,227.20	2338.56	2455.49	2578.26	2707.18

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ	11,220.10	3,885.60	0	0.00	0.00	0.00	0.00
ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	2,510.00	1,638.40	0	0.00	0.00	0.00	0.00
ԱՌԱՆՑ ՏԵՂ.ՏՈՒՐՔԻ ԳԱՆՁՄ.ՄԱՏՈՒՑՎ.ԾԱՌԱՅ-ՐԻ ԴԻՄԱՑ ՍՏԱՑՎ.(ԳԱՆՁՎՈՂ)ՎՃԱՐ.	0	380.50	393.76	413.45	434.12	455.83	478.62
ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ	35,477.51	55,557.03	109,702.24	115187.35	120946.72	126994.06	133343.76
ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ ՉԱՓԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ	-1,706.69	2,401.87	553.50	581.18	610.23	640.75	672.78
ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑ. ՀԱՄԱՐ	1,009.77	1,671.50	750.00	787.50	826.88	868.22	911.63
ՏԵՂ.ՎՃԱՐՆԵՐ ՁԱՏԻԿ ՄԱՆԿ.ՆՈՒՀ ՀՈԱԿ-Ի ԾԱՌ. ՕԳՏՎ. ՀԱՄԱՐ	5,025.40	9,652.20	12,054.00	12656.70	13289.54	13954.01	14651.71
ՏԵՂ.ՎՃԱՐՆԵՐ ԳՆԴԵՎԱՁԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԾԱՌ. ՕԳՏՎ. ՀԱՄԱՐ	223.10	626.00	1,842.50	1934.63	2031.36	2132.92	2239.57
ՏԵՂ.ՎՃԱՐՆԵՐԱՐՎԵՍՏԻ Հ.1 ԴՊՐՈՑ ՀՈԱԿ-Ի ԾԱՌ. ՕԳՏՎ. ՀԱՄԱՐ	1,315.85	2,351.50	2,059.13	2162.09	2270.19	2383.70	2502.89
ՏԵՂ.ՎՃԱՐՆԵՐ ԱՐՎԵՍՏԻ Հ.2 ԴՊՐՈՑ ՀՈԱԿ-Ի ԾԱՌ. ՕԳՏՎ. ՀԱՄԱՐ	3,646.05	4,635.40	6,439.50	6761.48	7099.55	7454.53	7827.25
ՏԵՂ.ՎՃԱՐՆԵՐՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԾԱՌ. ՕԳՏՎ. ՀԱՄԱՐ	368.40	1,736.70	2,101.00	2206.05	2316.35	2432.17	2553.78
ՏԵՂ.ՎՃԱՐՆԵՐ ՁՀԿՍԲ ՀՈԱԿ-Ի ԾԱՌ. ՕԳՏՎ. ՀԱՄԱՐ	12,539.73	12,844.60	18,771.36	19709.93	20695.42	21730.20	22816.71
ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐ	13,055.90	15,992.99	12,416.53	13037.36	13689.22	14373.69	15092.37
ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌ. ՄԱՏՈՒՑՄԱՆ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎ. ՎՃԱՐ	0	0	8,538.50	8965.43	9413.70	9884.38	10378.60

ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌԱՎԱՐՎՈՂ ԲԱՋՄԱԲՆ՝ ՖՈՆԴԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐ	0	0	10,800.00	11340.00	11907.00	12502.35	13127.47
ՀՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐ	0	0	2,758.32	2896.24	3041.05	3193.10	3352.76
ՃՈՊԱՆՈՒՂԻ ՀՀ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՎՃԱՐ	0	0	29,467.90	30941.30	32488.36	34112.78	35818.42
ԻՆՔՆԱԿ.ԿԱՌՈՒՑՎ. ՇԵՆՔ-ՇԻՆ-ՐԻ ՕՐԻՆԱԿՆՑՄ. ՀԱՄԱՐ	0.00	3,644.27	1,150.00	1207.50	1267.88	1331.27	1397.83
ՄՈՒՏՔԵՐ ՏՈՒՅԺԵՐԻՑ, ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻՑ	0	20.00	8,942.00	9389.10	9858.56	10351.48	10869.06
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ	0	20.00		0.00	0.00	0.00	0.00
ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	34,728.86	72,451.72		0.00	0.00	0.00	0.00
ՎԱՐՉ.Բ-Ի ՊԱՀՈՒՍՏ. ՖՈՆԴԻՑ ՖՈՆԴ.ԲՅ. ԿԱՏԱՐՎ.ՀՏԿՑ-ԻՑ ՄՈՒՏՔ.,	0	40,000.00	1,228.81	1290.25	1354.76	1422.50	1493.63
ՀԱՄ.ԲՅՈՒՋԵ ՄՈՒՏՔԱԳՐՄ. ԵՆԹԱԿԱ ԱՅԼ ԵԿԱՄ-ԵՐ	34,728.86	32,451.72	7,713.19	8098.85	8503.79	8928.98	9375.43
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	53,222.95	139,106.66	22,879.92	24023.92	25225.11	26486.37	27810.69
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	165.13	1,265.30		0.00	0.00	0.00	0.00
ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	53,057.82	137,841.36	22,879.92	24023.92	25225.11	26486.37	27810.69
ԸՆԴԱՄԵՆԸ	713,338.74	827,677.64	665,002.00	698252.10	733164.71	769822.94	808314.09

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայում արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝

ՏԻՄ-ի կողմից ընտրված ռազմավարությունից և առաջիկա հինգ տարիների համար սահմանված հիմնական նպատակներից որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը՝ ընդգրկելու համայնքի 2022-2026 թթ. ՀԶԾ-ում:

Ստորև ներկայացվում է թվարկված բոլոր ծրագրերի իրականացման հնարավորությունների ՀԶԾ-ում դրանց ձևակերպման անհրաժեշտության վերաբերյալ վերլուծությունը՝

- Համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների պահպանման ծրագրերը նախկին տարիներին մշտապես իրականացվել են և գալիք հինգ տարիներին ևս իրականացվելու են՝ առանց զգալի փոփոխությունների: Դրանք համարվում են համայնքի առաջնահերթ ծրագրեր և ձևակերպվելու են համայնքի տարեկան բյուջեներում այդ հիմնարկների պահպանման ծախսերի նախահաշիվներով, այդ պատճառով ՀԶՀԾ-ում դրանց, որպես առանձին ծրագրերի, ձևակերպման անհրաժեշտությունը չկա:

- Աղբահանության ծառայության մատուցման և համայնքը բարեկարգ պահելու համար ստեղծված և գործող «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերը և առանձին ծառայությունների մատուցման ֆինանսավորումը յուրաքանչյուր տարի կրկնվող են, նույն կերպ իրականացվող և ՀԶԾ-ում դրանց առանձին ձևակերպման անհրաժեշտությունը չկա:

- Համայնքի աշխատակազմի համար գույքի ձեռքբերման ծրագիրը համայնքի հրատապ կարիքների համար անհրաժեշտ գույքի միանվագ գնման ծրագիր է, որի առանձին ձևակերպման անհրաժեշտությունը չկա:

Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ

2022-2026 թթ. ընթացքում համայնքի սեփականություն համարվող հողերի, անտառային և ջրային տարածքների, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում նախատեսվում է կազմակերպել և իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- համագործակցել Հայանտառ ՓԲԸ-ի հետ՝ համայնքի անտառային ֆոնդի պահպանությունը, մասնավորապես՝ անտառում ձմեռնամուտի սանիտարական հատումները, սահմանված նորմերին համապատասխան պատշաճ մակարդակով իրականացնելու համար,

- լայն բացատրական աշխատանք կատարել բնակչության հետ՝ կենցաղային աղբը չթափելու դրա համար չնախատեսված վայրերում, զերծ մնալու բնության և շրջակա միջավայրի աղտոտումից ու վնասումից, տարածաշրջանի այլ համայնքների հետ ծավալել միջհամայնքային համագործակցություն՝ լուծելու ընդհանուր աղբավայրի, աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների կազմակերպման և մատուցման հարցերը,

- սահմանել վերահսկողություն համայնքին տեխնիկական ջրի մատակարարման ջրային ավազանում՝ արգելելու անասունների մուտքն ավազան, կանխարգելելու բնության և շրջակա միջավայրի աղտոտումը և վնասումը, ինչպես նաև սուր վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման վտանգը համայնքում,

- սահմանել վերահսկողություն համայնքում գործող քարի վերամշակման արտադրամասերի, քարհանք շահագործողների գործունեության նկատմամբ՝ ուղղված բնության և շրջակա միջավայրի պահպանմանը,

- սահմանել վերահսկողություն համայնքում գործող փոքր ՀԷԿ-երի գործունեության նկատմամբ՝ ուղղված բնության և շրջակա միջավայրի պահպանմանը

- յուրաքանչյուր տարի գարնանը համայնքում կազմակերպել 2-3 շաբաթօրյակ՝ իրականացնելու բնության և շրջակա միջավայրի մաքրության, ծառատնկման և ծաղկատնկման աշխատանքներ, ներգրավելով նաև երիտասարդներին և դպրոցականներին:

Համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ

Չնայած ՀՀ օրենսդրությամբ ՏԻՄ-երն այս ոլորտում պարտադիր լիազորություններ համարյա թե չունեն, այնուամենայնիվ, համայնքի ՏԻՄ-երը շահագրգռված են համայնքում գործարար միջավայրի բարելավմամբ և պատրաստակամ են ըստ ամենայնի օժանդակել այս ոլորտում ցանկացած նոր նախաձեռնության, քանի որ այն մեծապես կնպաստի համայնքում նոր աշխատատեղերի ստեղծմանը, բնակչության եկամուտների ավելացմանը և վճարունակության բարձրացմանը, համայնքի բյուջետային սեփական միջոցների հավաքագրման մակարդակի բարձրացմանը և ծավալի մեծացմանը, և, այս ամենի արդյունքում՝ համայնքի ընդհանուր զարգացմանը:

Համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված՝ 2022-2026 թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- ըստ ամենայնի աջակցել համայնքում գործող հյուրանոցային և առողջարանային կազմակերպություններին՝ աստիճանաբար ընդլայնելու իրենց գործունեության ծավալները և ավելացնելու աշխատատեղերի քանակը,

- ըստ ամենայնի աջակցել համայնքում գործող արտադրական ձեռնարկություններին՝ աստիճանաբար ընդլայնելու բազալտի վերամշակման և քարե սալիկների արտադրության ծավալները և ավելացնելու աշխատատեղերի քանակը,

- համայնքում խթանել անասնապահական, թռչնաբուծական և մեղվապահական մթերքների (մասնավորապես՝ կաթի, մսի, ձվի, մեղրի) արտադրության, հանձնման և վերամշակման արտադրամասերի ստեղծումը, գործարկումը և զարգացումը,

- համայնքում կազմակերպել և աստիճանական զարգացնել սառեցված կիսաֆաբրիկատների արտադրությունը և իրացումը,

- համայնքում խթանել առևտրի և ծառայությունների փոքր ու միջին նոր կետերի բացումը, բնակչությանը և հյուրերին պատշաճ մակարդակով սպասարկումը՝ պաշտպանելով դրանց սեփականատերերի իրավունքները և շահերը,

- համայնքում դնել էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծման հիմքերը՝ ապահովելու զբոսաշրջիկների գիշերակացը տնային պայմաններում, հասարակական սնունդը, սպասարկումը, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցումը,

- աստիճանաբար նորոգել և բարեկարգել ներհամայնքային ճանապարհները և փողոցները, անցկացնել արտաքին լուսավորության համակարգեր, տեղադրել ճանապարհային նշաններ՝ նպաստելու համայնքում գործարար միջավայրի բարելավմանը և բիզնեսի զարգացմանը,

- հաճախակի կազմակերպել համայնքի գործարարների հանդիպումներ, կլոր-սեղան քննարկումներ, ցուցահանդես-վաճառքներ, փորձի փոխանակման և այլ միջոցառումներ:

Աղետների ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներ

Համայնքում աղետների ռիսկի կառավարմանն ուղղված՝ 2022-2026 թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- համայնքի բնակչության իմացության, հմտությունների, գիտելիքների մակարդակի ուսումնասիրում և համայնքում առկա ռեսուրսների բացահայտում, որոնք հնարավոր է ուղղել աղետների ռիսկի նվազեցմանը նպաստող համայնքահեն միջոցառումների պլանավորմանն ու իրականացմանը,

- համայնքի խոցելիության և կարողությունների շարունակական գնահատում, ներառյալ այդ գործընթացի կազմակերպման և իրականացման խմբի ձևավորումը, նախապատրաստական աշխատանքները, տվյալների հավաքագրումը և հետազոտումը՝ համապատասխան գործիքների և մեթոդների ընտրությամբ, վերլուծական աշխատանքների իրագործումը՝ յուրաքանչյուր փուլում ձեռնարկվող քայլերի և ակնկալվող արդյունքների ամրագրմամբ և ձևակերպմամբ,

- համայնքում աղետների ռիսկի կառավարման գործողությունների և միջոցառումների պլանի իրականացում,

- համայնքում աղետների ռիսկի կառավարման կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

Համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ

Համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված՝ 2022-2026 թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները և միջոցառումները՝

- համայնքի սեփականություն համարվող կոմունալ ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, ըստ հնարավորությունների՝ նորոգում և զարգացում,

- համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքի կազմակերպում,

- վերահսկողություն համայնքի բնակչությանը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր կազմակերպությունների կողմից մատուցվող կոմունալ ծառայությունների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, բնակավայրի բարեկարգում և կանաչապատում,

գերեզմանատների գործունեության կազմակերպում և դրանց պահպանում և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման նկատմամբ,

- համայնքի հանգստի վայրերի, խաղահրապարակների, կանաչ տարածքների խնամքի և պահպանության կազմակերպում:

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությանն ուղղված միջոցառումներ

Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը ոլորտում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- համայնքի բնակչության իրազեկվածության բարձրացում՝ ՀՀ տեղական ինքնակառավարման ոլորտի օրենսդրության և համայնքի ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ ,

- համայնքի կարիքների և հիմնախնդիրների պարբերական քննարկում, վերլուծում և գնահատում՝ ֆոկուս-խումբ քննարկումների, համայնքային հանդիպումների, ժողովների և բնակիչների հետ անմիջական շփումների և երկխոսությունների միջոցով,

- բնակիչների ներգրավում համայնքի բյուջեի և զարգացման ծրագրերի մասնակցային պլանավորման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման գործընթացներում,

- համայնքի բնակիչների շահերի պաշտպանություն և համախմբում (մոբիլիզացիա)՝ համայնքի որոշակի խնդիրների լուծման, հանրային ծառայությունների մատուցման շուրջ,

- համայնքի ՏԻՄ-երի (ղեկավար, ավագանի), աշխատակազմի, ակտիվ բնակիչների շարունակական կրթում և վերապատրաստում տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության բնագավառում,

- համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի միջոցով նպաստել համայնքում տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանը և հասցեականությանը՝ ապահովելով համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

Սորև ներկայացվում են ՀՋՀԾ-ում ներառվող ոլորտային մնացած ծրագրերի առանձին ձևակերպումներն՝ ըստ ոլորտային ծրագրի օրինակելի ձևի